

292

3K13
4-11

1937



03 NOV 2009 13 MAY 2005

4-88
un

un

Կ. ՄԱՐԲՍԻ „ԿԱՊԻՏԱԼ“-Ը I ՀԱՏՈՐ, I ԳԻՐԲ

ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍԸ

1010
42407

627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՐԴԱՐԱՆ
ՀԱՅ. ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԳԻՐԴԱՐԱՆ
ՀԱՅ. ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԳԻՐԴԱՐԱՆ
1937

7 APR 2013

2/2

Կ. ՄԱՐԿՍԻ «ԿԱՊԻՏԱԼ»-Ը. I ՀԱՏՈՐ, I ԳԻՐԲ
ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊՐԱՑԵԱԸ

ՀԱՅԿԱՊԵՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻՐ I ԴՈՋԱՆ I

ՅԱՅՑՈՂՈՒ ՄԱՅՁԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՊԵՏԱՆ

500

Փ. ԶՆԴԵԼՍ
«ԿԱՍԻՏԱԼ» Կ. ՄԱՐԿՏԱ, Դ. I, ԿԻ. I
Սրոցես սրոիզսո՞ճստա կապիտալա
Արիսարտիզճատ, Երեւան, 1937

1. Ա Պ Ր Ա Ն Ք Ն Ի Ն Ք Ն Ի Ն

Այն հասարակությունների հարստությունը, վորոնց մեջ իշխում է կապիտալիստական արտադրությունը, կայանում է ապրանքների մեջ: Ապրանքը մի բան է, վոր սպառարժեք ունի. վերջինս գոյություն ունի հասարակության բոլոր ձևերում, բայց կապիտալիստական հասարակության մեջ սպառարժեքը միաժամանակ նաև փոխանակարժեքի նյութական կրողն է:

Փոխանակարժեքը յենթադրում է մի tertium comparationis², վորով նա չափվում է՝ աշխատանքը, փոխանակարժեքների ընդհանուր հասարակական սուբստանցը, այն է՝ հասարակականորեն անհրաժեշտ աշխատամանակը, վոր առարկայացված է փոխանակարժեքի մեջ:

Ինչպես վոր սպրանքն է յերկտրոնված մի բան՝ սպառարժեք և փոխանակարժեք, այնպես էլ նրա մեջ զարուհակված աշխատանքն է յերկտրոնված՝ մի կողմից իբրև վորոք արտադրողական գործունեություն, ջուրհակի աշխատանք, դերձակի աշխատանք և այլն, «ոգտակար աշխատանք», մյուս կողմից իբրև մտողիային աշխատանքի պարզ ծախսում, խտացած վերացողական աշխատանք: Առաջինն սպառարժեք է արտադրում, վեր-

¹ Թվագիր ծանոթագրությունները և միջակ փակագծերը հայերեն թարգմանությանն են: Խմբ.:

² Բառացի՝ բաղդատման համար յերրորդը, այսինքն չափիչ:

չինը փոխանակարժեք. միայն վերջինն է քանակապես բաղդատելի (skilled և unskilled¹, բարդ և պարզ աշխատանքի տարբերումը հասusասում է այս)։

Փոխանակարժեքի սուբստանցն ուրեմն վերացական աշխատանքն է, նրա մեծությունը՝ աշխատանքի ժամանակաչափը։ Այժմ պետք է քննել նաև փոխանակարժեքի ձևը։

1) a ապրանքի x-ը = b ապրանքի y-ին, մի ապրանքի արժեքը՝ արտահայտված մի ուրիշ ապրանքի սպառարժեքով, նրա հաւաքեալումն արժեքն է։ Յերկու ապրանքների համարժեքութեան արտահայտութեանը հարաբերական արժեքի պարզ ձևն է։ Վերևի հավասարման մեջ b ապրանքի y-ը համարժեքն է։ Սրա մեջ a ապրանքի x-ն ստանում է իր արժեքը ի հակադրութեանը նրա բնական, մինչդեռ b ապրանքի y-ը դրա հետ միասին անմիջական փոխանակելիութեան հատկութեան է ստանում հենց իր բնականում։ Ապրանքի փոխանակարժեքը պատմական վորոշ պայմանների շնորհիվ դրոշմված է նրա սպառարժեքի վրա։

Այդ պատճառով ապրանքը չի կարող փոխանակարժեքն արտահայտել իր սեփական սպառարժեքով, այլ մի ուրիշ ապրանքի սպառարժեքով միայն։ Յերկու կոնկրետ աշխատարտողրանքների հավասարեցման մեջ է միայն յերևան գալիս նրանց մեջ պարունակված կոնկրետ աշխատանքի հատկութեան իբրև վերացականորեն մարդկային աշխատանք. այսինքն՝ մի ապրանք կարող է հարաբերութեան մեջ մտնել վնչ թե իր, այլ մի ուրիշ ապրանքատեսակի մեջ պարունակված կոնկրետ աշխատանքի հետ, իբրև վերացական աշխատանքի սոսկ իրադործման ձևի հետ։

¹ Վորակյալ և վոչ վորակյալ (սովորովի և վոչ սովորովի)։

a ապրանքի x-ը = b ապրանքի y-ին հավասարումն անհրաժեշտորեն պարունակում է իր մեջ այն, ինչ որ a ապրանքի x-ը կարող է նաև ուրիշ ապրանքներով արտահայտվել. ուրեմն

2) a ապրանքի x-ը = b ապրանքի y-ին = c ապրանքի z-ին = d ապրանքի v-ին = e ապրանքի u-ին և այլն։ Սա ծավալուն հարաբերական արժեքն է։ Այստեղ a ապրանքի x-ը հարաբերութեան մեջ է մտնում արդեն վնչ թե մեկ, այլ բոլոր ապրանքների հետ, իբրև իր իսկ մեջ ներկայացված աշխատանքի սոսկ յերևանակների հետ։ Իայց ծավալուն հարաբերական արժեքը սոսկ հակադրոշմով բերում է

3) Հարաբերական արժեքի շրջուն 2-րդ ձևին՝

b ապրանքի y-ը = a ապրանքի x-ին

c ապրանքի v-ն = »

d ապրանքի u-ն = »

e ապրանքի t-ն = »

և այլն և այլն։

Այստեղ ապրանքներն ստանում են այն քնդհանրահան հաւաքեալումն արժեքն, ինչ որ մեջ նրանք իբրև ապրանքներ իրենց սպառարժեքից վերանում են և իրար հավասար են դառնում իբրև վերացական աշխատանքի նյութականացում a ապրանքի x-ի մեջ։ a ապրանքի x-ը համարժեքի սեռածն է բոլոր մյուս ապրանքների համար. նա վերջիններիս քնդհանրադրումն համարժեքն է, նրա մեջ նյութականացված աշխատանքն ուղղակի ներկայացնում է վերացական աշխատանքի իրացումը, ընդհանրական աշխատանքը։

Սակայն այս դեպքում՝

4) այդ շարքի ամեն մի ապրանքը կարող է ընդհանրական համարժեքի դերն ստանձնել, բայց միաժամանակ

մանակ՝ նրանցից միշտ միայն մեկը, վորովհետեւ յեթե
բոլոր ապրանքներն ընդհանրական համարժեքներ լի-
նեյին, յուրաքանչյուրը մյուսներին նորից կբացառեր
ընդհանրական համարժեքներ լինելուց: Յորդ ձեն ա-
ռաջացել է վնչ թե 2 ապրանքի x-ից, այլ մյուս ապ-
րանքներից, որչեկտիվորեն: Ուրեմն մի վորոշակի ապ-
րանք պետք է այդ դերն ստանձնի,—ժամանակի ըն-
թացքում նա կարող է փոխվել,—է միայն դրա շնոր-
հիվ է, վոր ապրանքը լիովին ապրանք է դառնում:
Այս առանձնահատուկ ապրանքը, վորի բնածէի հետ
համահունչ է ընդհանրական համարժեքաձեւը, փողն է:

Ապրանքի [ըմբռնման] մեջ դժվարությունը նրանում
է, վոր նա, խնչպես կապիտալիստական արտադրայե-
ղանակի բոլոր կատեգորիաները, անձնային հարաբե-
րությունը ներկայացնում է իրային ծածկույթի տակ:
Արտադրողներն իրենց տարբեր աշխատանքները հարա-
բերության մեջ են դնում իբրեւ ընդհանրական մարդ-
կային աշխատանք, իրենց արտադրանքները հարաբե-
րության մեջ դնելով իբրեւ ապրանքներ. առանց իրի
այս միջնորդության նրանք չեն կարող այդ գլուխ բե-
րել: Անձերի հարաբերությունը յեւեան է գալիս այս-
պիսով վորպես իրերի հարաբերություն:

Մի հասարակության համար, վորի մեջ ապրան-
քարտադրությունն է գերիշխում, քրիստոնեյությունը,
հատկապես բողոքականությունը, հարմար կրոն է:

2. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍԸ

Վոր ապրանքն ապրանք է, այդ նա ապացուցում
է փոխանակության մեջ: Յերկու ապրանքների սեփա-
կանատերերը պետք է կամենան իրենց ապրանքները
փոխանակել և ուրեմն միմյանց փոխադարձաբար մա-

նավոր սեփականացնելու հանաչել: Այս իրավական հա-
րաբերությունը, վորի ձեւը պայմանադրությունն է, մի
կամային հարաբերություն է միայն, վորի մեջ արտա-
ցուում է գտնում տնտեսական հարաբերությունը: Նրա
բովանդակությունը տրված է հենց տնտեսական հարա-
բերության միջոցով. p. 45 (47) [53]:

Ապրանքն ապառարժեք է իր վոշ-տիրոջ համար և
վոշ-ապառարժեք՝ իր տիրոջ համար: Այստեղից ել՝ փո-
խանակության պահանջը: Սակայն ապրանքի ամեն մի
սեփականատեր կամենում է փոխանակությամբ ձեռք
բերել առանձնահատուկ, իրեն հարկավոր սպառար-
ժեքներ. այս չափով՝ փոխանակությունն անհատական
պրոցես է: Մյուս կողմից նա կամենում է իր ապրանքն
իրացնել իբրեւ արժեք, ուրեմն վորեն այլ ապրանքի
մեջ, անկախ նրանից՝ իր ապրանքն ուրիշ ապրանքի
տիրոջ համար սպառարժեք է, թե վոչ: Այս չափով՝ փո-
խանակությունը նրա համար ընդհանրական հասարա-
կական պրոցես է: Բայց միևնույն պրոցեսը չի կարող
բոլոր ապրանքատերերի համար միաժամանակ անհա-
տական և ընդհանրական հասարակական լինել: Յու-
րաքանչյուր ապրանքատիրոջ համար իր ապրանքը
նշանակություն ունի իբրեւ ընդհանրական համարժեք,
իսկ բոլոր մյուս ապրանքները՝ իբրեւ նրա ապրանքի
հատուկ համարժեքների վորոշ քանակ:

Յեւ վորովհետեւ բոլոր ապրանքատերերը նույնն են
անում, վոչ մի ապրանք ընդհանրական հարաբերական

¹ p. (pagina = էջ) առաջի հետո յեկող առաջին թիվը ցույց է
ապիս «կապիտալի» դերմաներեն առաջին հրատարակության
(1867 թ.) էջերը, յերկրորդ թիվը վերաբերում է «կապիտալի»
դերմաներեն չորրորդ հրատարակությանը (1890 թ.). [իսկ յերրոր-
դը՝ հայերեն հրատարակությանը (1933 թ.)]:

արժեձև չե, վորի մեջ նրանք իբրև արժեքներ հալտա-
արվում են և իբրև արժեքի մեծություններ բաղդատ-
վում: Այս պատճառով նրանք իբար դեմ կանգնած են
ընդհանրապես վոչ իբրև ապրանքներ, այլ լոկ իբրև
արտադրանքներ. p. 47 (49) [54—55]:

Ապրանքները կարող են իբար հետ հարաբերու-
թյան մեջ մտնել իբրև արժեքներ, և հետևապես իբրև
ապրանքներ, միայն այն դեպքում, յիթե նրանք հա-
կադրաբար են հարաբերության մեջ մտնում մի ուրիշ
ապրանքի հետ, իբրև ընդհանրական համարժեքի հետ:
Բայց միայն հաշտակալան գործողությունը կարող է
մի վարս ապրանքի դարձնել բնդհանրակալան հաշտակա-
լան փող:

Այս իմանենտ հակասությունը, վոր ապրանքն ունի
իբրև սպառարժեքի և փոխանակարժեքի անմիջական
միասնություն, իբրև ոգտակար մասնավոր աշխատանքի
արդյունք... և իբրև արստրակտ մարդկային աշխատան-
քի անմիջական ու հասարակական նյութականացում,
այդ հակասությունը հանգիստ ու դադար չի առնում,
մինչև վոր ձևավորվում է իբրև ապրանքի կրկնադա-
կում ապրանքի և փողի. p. 48 (50) [56]:

Քանի վոր մյուս բոլոր ապրանքները փողի հատուկ
համարժեքներն են միայն, իսկ փողը նրանց ընդհան-
րական համարժեքը, ապա նրանք իբրև հասուկ ապ-
րանքներ են հարաբերում փողին իբրև ընդհանրական
ապրանքի. p. 51 (52) [58]: Փոխանակության պրոցեսն
այն ապրանքին, վորը նա փող է դարձնում, մնչ թե
նրա արժեքն է տալիս, այլ նրա արժեձևը. p. 51 (53) [59]:
Ֆետիշիզմ—չի թվում, վոր մի ապրանք փող է դա-
նում, լոկ այն պատճառով, վոր մյուս ապրանքները
հանրակողմանիորեն արտահայտում են իրենց արժեք-

ները նրա մեջ, այլ ընդհակառակը, թվում է, թե նրանք
իրենց արժեքներն արտահայտում են նրա մեջ այն
պատճառով, վոր նա փող է:

3. ՓՈՂԸ ԿԱՄ ԱՊՐԱՆԳԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

A. Արժեքների չափը (վոսկին յեմքադրված է = փողի)

Փողն իբրև արժեչափ, ապրանքների իմանենտ ար-
ժեչափի, աշխատած մտնակի, անհրաժեշտ յերևածն է:
Ապրանքների արժեքի պարզ հարաբերական արտա-
հայտությունը փողով՝ a ապրանքի x -ը = y փողի, նրանց
գինն է. p. 55 (56) [62]:

Ապրանքի գինը, նրա դրամաձևը, արտահայտվում
է յերևակայական փողի մեջ. ուրեմն փողն արժեքների
չափ է հանդիսանում միայն իբրև իդեալական փող.
p. 57 (57) [63]:

Արժեքները գնի փոխարկվելուց հետո, տեխնիկա-
պես անհրաժեշտ է դառնում արժեքների չափը շարու-
նակել զարգացնել մինչև նա գի րի մաշաբ դառնա,
այսինքն ֆիքսացիայի յե յենթարկվում վոսկու մի
վորոշ քանակ, վորի միջոցով չափվում են վոսկու տա-
բե քանակներ: Սա բոլորովին անարբեր է արժեքների
չափից, վորն ինքը կախված է վոսկու արժեքից, իսկ
վերջինս գների մասշտաբի վրա ազդեցություն չունի.
p. 59 (59) [65]:

Յերբ գները ներկայացված են վոսկու հաշվանուն-
ներով, վոսկին ծառայում է իբրև հաշվադրամ:

Յեթե գինը, իբրև ապրանքի արժեքի մեծության
ցուցանիշ, վոսկու հետ ունեցած նրա փոխանակային
հարաբերության ցուցանիշն է, ապա այստեղից չի հե-
տևում հակադարձաբար, վոր դրամի հետ ունեցած նրա

փոխանակային հարաբերության ցուցանիշն անհրաժեշտաբար նրա արժեքի մեծության ցուցանիշն է: Յեթե հանգամանքները թույլ են տալիս կամ հարկադրում մի ապրանք իր արժեքից բարձր կամ ցած վաճառել, ապա այս վաճառագնքերը նրա արժեքին համապատասխան չեն, բայց այնուամենայնիվ ապրանքի գներն են, վորովհետև նրանք 1) նրա արժեքն են՝ փող են, և 2) դրամի հետ ունեցած նրա փոխանակային հարաբերության ցուցանիշներն են:

Ուրեմն գնի և արժեքային մեծության քանակական անդուգադիպման հնարավորությունը արված է հենց գեոմետրիայի մեջ: Սա այս ձևի պակասությունը չէ, այլ ընդհակառակը, նրան դարձնում է լիովին ազեքվատ ձև արտադրության մի յեղանակի, վորի մեջ կանոնը կարող է իր համար ճանապարհ բանալ լոկ իրրև անկանոնության կուրորեն գործող միջին որևեք: Բայց գնաձևը կարող է նաև...մի վորակական հակասություն իր մեջ թաղցնել, այնպես վոր գինն ընդհանրապես դադարում է արժեքային արտահայտություն լինելուց... խիղճը, պատիվը և այլն կարող են... իրենց գնի միջոցով ապրանքային ձև ստանալ. p. 61 (63) [70]:

Արժեքների չափումը փողով՝ գնաձևը, իր մեջ պարունակում է ոտարման անհրաժեշտությունը, գնի իրական վորոշումը՝ իրականը: Այստեղից ել՝ շրջանառությունը:

В. Црѣвнатовъ ꙗко мѣръ

а. Ապրանքների փոխանակությունը

Պարզ ձև՝ Ա—Փ—Ա, վորի նյութական բովանդակությունն է Ա—Ա: Փոխանակարժեքը տրվում է, իսկ ապառարժեքը յուրացվում:

ա) Առաջին փուլ՝ Ա—Փ=վաճառք, վորին յերկու անձ են մասնակցում. ուրեմն հնարավոր է անհաջողությունը, արժեքից կամ արտադրած ալքերից ցած վաճառքը, յեթե ապրանքի հասարակական արժեքը փոխվում է: «Աշխատանքի բաժանումը աշխատանքի արտադրանքն ապրանք է դարձնում և դրանով անհրաժեշտ է դարձնում նրա վորդ դառնալը»: Նա միաժամանակ պատահալիմ է դարձնում այս կերպափոխության հաջողվելը. p. 67 (68) [75]: Յեթե այստեղ դիտարկենք յերևույթը զուտ, Ա—Փ-ն յենթադրում է, վոր Փ-ի տերը (յեթե նա վոսկի արտադրող չէ) իր Փ-ն ստացել է ուրիշ ապրանքի հետ նախապես փոխանակություն կատարելով. յերևույթն ուրեմն գեոդի համար վնչ միայն հակադարձ է, այսինքն Փ—Ա, այլ և յենթադրում է նրա մոտ մի նախնական վաճառք և այլն, այնպես վոր մենք առքերի ու վաճառքների մի անվերջ շարքում ենք գտնվում:

բ) Նույնն է տեղի ունենում Փ—Ա յերկրորդ փուլում՝ առի՛ ժամանակ, վորը միաժամանակ մյուս մասնակցողի համար վաճառք է:

Ամբողջ պրոցեսն ուրեմն առքերի ու վաճառքների մի շրջապատւոյտ է:

Ապրանքագրգանառություն: Սա միանգամայն տարբեր է արտադրանքների անմիջական փոխանակությունից. մի կողմից ճեղքվում են արտադրանքների անմիջական փոխանակման անհատական և տեղական սահմանները, և միջնորդվում է մարդկային աշխատանքի նյութափոխանակումը, մյուս կողմից այստեղ արդեն յերևան է գալիս, վոր ամբողջ պրոցեսը պայմանավորված է հասարակական բնակապետով, վորոնք անկախ են գործող անձերից. p. 72 (71) [79]: Պարզ փոխանա-

կությունն սպառվում էր փոխանակության այն մի տկտով, վորտեղ ամեն վոր սպառարժեքը փոխանակում է սպառարժեքի հետ, իսկ շրջանառությունն անվերջ շարունակվում է p. 72 (72) [80]:

Այստեղ [կա] տնտեսագիտական այն սխալ գոգման, վոր իբր ասպրանգաբաժնույթյունն առհերս ու վաճառմանի մի անհրաժեշտ հավասարակշռությունն է պայմանավորում, վորովհետև ամեն մի առվ վաճառք է և vice versa¹, վորով ասել ենք զգույն, քե իբր ամեն մի վաճառք իր եես շուկայ յե բերում նաև իր գնորդին: 1) Առքն ու վաճառքը մի կողմից յերկու բեկորին հակադիր անձերի նույնական գործողությունն են, մյուս կողմից՝ մի անձի յերկու բեկորին հակադիր գործողությունները: Այս պատճառով առքի ու վաճառքի նույնությունն իր մեջ պարունակում է այն, վոր ասպրանքն անողտակար է, յեթե նա չի վաճառվում, այլև այն, վոր այս դեպքը կաճող է տեղի ունենալ: 2) Ա.—Փ.—ն, իբրև մասնական պրոցես, միաժամանակ ինքնուրույն պրոցես է և իր մեջ ունի այն, վոր Փ.—ն ստացողը կաբող է ընտրել այն մոմենտը, յերբ նա այս Փ.—ն նորից Ա կդարձնի: Նա կարող է սպասել: Ա.—Փ և Փ.—Ա ինքնուրույն պրոցեսների ներքին միասնությունը, հենց այդ պրոցեսների ինքնուրույնության շնորհիվ, շարժվում է արտաքին հակադրությունների մեջ, և յերբ այդ կախված պրոցեսների ինքնուրույնացումը մի վորոշ սահմանի յե հասնում, միասնությունն իրեն զգալ է տալիս ճգնաժամով, վորի հնարավորությունն, ուրեմն, արդեն այստեղ տրված է:

Իբրև ասպրանքաշրջանառության միջնորդ՝ փողը շրջանառության միջոց է:

¹ Ընդհակառակը:

Փողը միջնորդում է ամեն մի անհատական ապրանքի մուտքը շրջանառության մեջ և յեղը նրանից, իսկ ինքը շարունակ մնում է նրա մեջ: Այդ պատճառով թեպետ փողի շրջանառությունն ասպրանքաշրջանառության սոսկ արտադրությունն է, բայց և այնպես ասպրանքաշրջանառությունը յերևան է գալիս իբրև փողի շրջանառության հետևանք: Քանի վոր փողը շարունակ շրջանառության վորորտում է մնում, հարց է ծագում՝ ի՞նչպե՞ս փող կա նրա [շրջանառության վորորտի] մեջ:

Շրջան գործող փողի մասսան վորոշված է ասպրանգների գների գումարով (յեթե դրամարժեքն անփոփոխ է), իսկ վերջինս՝ շրջանառության մեջ գտնվող ասպրանգների մասսայով: Յեթե ասպրանքների այս մասսան տված համարենք, ապա շրջան գործող փողի մասսան յոտանվում է ասպրանքների գների աստանույնների հետ միասին: Բայց վորովհետև միևնույն ստակը տվյալ ժամանակի ընթացքում միշտ մի շարք գործարքներ է միջնորդում իրար հետևից, ապա ժամանակի տվյալ հատվածի համար $\frac{\text{ասպրանքների գների գումարը}}{\text{մի ստակի պտույտների թիվը}} = \text{Իբրև շրջանառության միջոց գործող փողի մասսային. p. 80 (78) [86]:}$

Այս պատճառով թղթադրամը կարող է դուրս մղել վոսկեդրամը, յեթե այն նետեն հագեցած շրջանառության մեջ:

Քանի վոր փողի շրջանառության մեջ յերևան է գալիս ասպրանքների շրջանառության պրոցեսը միայն, ապա նրա արագության մեջ էլ յերևան է գալիս ասպրանքների ձևափոխության արագությունը և նրա կան-

գառքի մեջ՝ առքի բաժանվելը վաճառքից, հասարակական նյութափոխանակութեան կանգառքը: Թե վորտեղից և առաջանում այս կանգառքը, այդ, բնականաբար, չի յերևում շրջանառութեանից, վորը նշում է հենց յերևութիւն միայն: Քաղքենին իրեն համար այդ բացատրում է շրջանառութեան միջոցների անբավարար քանակով. p. 81 (79) [87—88]:

Ergo¹—1) Ապրանքագների անփոփոխ մնալու դեպքում շրջան գործող դրամամասսան աճում է, յերբ շրջան գործող ապրանքամասսան աճում է կամ դրամապտույտը դանդաղում, և ընկնում է vice versa²:

2) Ապրանքների գների ընդհանրական բարձրացման դեպքում շրջան գործող դրամամասսան անփոփոխ է մնում, յերբ ապրանքամասսան պակասում է կամ շրջանառութեան արագութեանն ավելանում է նույն հարաբերութեամբ:

3) Ապրանքագների ընդհանրական անկման ժամանակ տեղի ունի շրջանի հակադարձը:

Ընդհանուր առմամբ հաստատվում է բավական կայուն մի միջին մակարդակ, վորը համարյա միայն ճգնաժամերի միջոցով է զգալի շեղումներ յենթարկվում:

с. Ստակ — արժեքիչ.

Գները մասշտաբը պետութեանն է սահմանում, ինչպէս և վոսկոս վորոշ կտորի՝ ստակի, անունը և նրա պատրաստումը: Համաշխարհային շուկայում համապատասխան ազդային համազգեստը նորից մի կողմ է նետվում (ստակամաքսն այստեղ անտես է արվում),

¹ Ուրեմն:

² Հակառակ դեպքում:

այնպէս վոր ստակն ու ձուլը միայն ձեռք են տարբերվում:

Բայց առաջի շրջանառութեան մեջ մտնում է, վորտեղից իբրև շրջանառութեան միջոց սկսում է տարբերվել վոսկոսից իբրև գների մասշտաբից. ստակը գնալով դառնում է իր պաշտոնական պարունակութեան սիմբոլը:

Սրանով թագնված կերպով արված է մետաղադրամների՝ նիշերով կամ սիմբոլներով փոխարինելու հնարավորութեանը: Այստեղից՝ 1) մանրուն ստակը պղնձանիշներից և արծաթանիշներից, վորոնց հաստատվելը իրական վոսկեդրամի կողքին արգելքի չէ հանդիպում այն քանակի սահմանափակումով, վորով նրանք legal tender¹ են: Նրանց պարունակութեանը որենքը վորոշում է միանգամայն իր քմահաճութեամբ և նրանց ստակային ֆունկցիան, այդպիսով, անկախ է դառնում նրանց արժեքից:

Այստեղից հնարավոր է դառնում անցումը կոնսերվացիայի արժեքների շրջանից (վարկադրամն այստեղ դեռ քննութեան չի առնվում): Վոր չափով վոր այս թղթադրամն իրոք շրջան է գործում վոսկեդրամի փոխարեն, նա յենթարկված է փողի շրջանառութեան որենքներին: Միայն այն հարաբերութեանը, վորով թղթադրամը փոխարինում է վոսկուն, կարող է հատուկ որենքի առարկա լինել, և այս որենքն այն է, վոր թղթադրամի արտաբերվելուց և սահմանափակվել այն քանակով, վորով պետք է իրոք շրջան գործեր նրա մեջ ներկայացված վոսկին: Թեպետ շրջանառութեան հագեցման աստիճանը տատանվում է, բայց փորձն ամենուրեք տալիս է մի միջինում, վորից

¹ Որինական վճարամիջոց:

նա յերեք չի ընկնում ավելի ներքև: Այս միջնակումը կարելի չի արտաբերել: Սրանից ավելին արտաբերելու դեպքում մի մասն անմիջապես ավելորդ է դառնում, հենց վոր հագեցման աստիճանն ընկնում է մինչև մի-նիում: Այսպիսի դեպքում թղթադրամի ընդհանուր քանակն ապրանքային աշխարհի ներսում ներկայաց-նում է այնուամենայնիվ այնպիսի վոսկեքանակ միայն, վորը վորոշվում է ապրանքային աշխարհի իմաննա-որենքներով և վորը միայն, հետևաբար, կարող է ներ-կայացվել թղթադրամի այդ քանակով:

Յեթե թղթադրամների մասսան կրկնակին է կլա-նած վոսկու մասսայի, ապա ամեն մի թղթաթերթիկ ընկնում է մինչև իր անվանական արժեքի կեսը: Ծիշա-այնպես, ինչպես յեթե վոսկին գների չափ լինելու իր ֆունկցիայի միջոցին փոխեր իր արժեքը. p. 89 (86) [94]:

C. Փող

a. Գանձակազմումը

Ապրանքաշրջանառության հենց առաջին զարգաց-ման հետ միասին անհրաժեշտություն ու բուռն ձգտում է զարգանում Ա—Փ-ի հետևանքը, Փ-ն, պինդ պահե-լու: Այս ձևավորությունը նյութավորսանակության սոսկական միջնորդումից դառնում է ինֆլատացիո-ն: Փողը քարանում գանձ է դառնում, ապրանքավաճա-ռը՝ գանձախափ. p. 91 (88) [97]:

Այս ձևը գերիշխող է ապրանքաշրջանառության հատկապես սկզբնական շրջանում: Ասիւ: Ապրանքա-շրջանառության հետագա զարգացման հետ միասին ամեն մի ապրանքարտադրող պետք է իր համար ապա-հովի nexus rerum-ը¹, հասարակական գրավականը՝ Փ-ն:

¹ Իրերի կապը:

Այսպես առաջ են գալիս ամենուրեք hoards¹-ը: Ապ-րանքաշրջանառության զարգացումը մեծացնում է փո-ղի՝ հարստության մշտապես մարտի պատրաստ, բա-ցարձակ հասարակական ձևի, դորությունը. p. 92 [98]

Գանձակազմման ձգտումն իր բնույթով սահման չունի: Վոսկեքանակ կամ ըստ իր ձևի՝ փողը սահման չունի, այսինքն նյութական հարստության ընդհան-րական ներկայացուցիչն է, վորովհետև անմիջորեն փո-խարկելի չի ամեն մի ապրանքի: Քանակապես, սակայն, ամեն մի իրական դրամագումար սահմանափակ է, ուս-տի է սահմանափակ ներգործություն ունեցող գնման միջոց է միայն: Այս հակասությունը շարունակ մղում է գանձակազմումը դեպի հետ, նորից դեպի կուտակ-ման սիդիֆյան աշխատանքը:

Դրա կողքին վոսկու և արծաթի in plate² կուտա-կումը միաժամանակ նոր շուկա չի այս մետաղների համար, միաժամանակ թագուն դրամադրյուր է:

Գանձակազմումը ծառայում է իբրև ռզան գործող փողի հեռացար և մեծաբեք առու՝ շրջանառության հագեցման աստիճանի մշտական տատանումների ըն-թացքում. p. 95 (92) [101]:

b. Վաքարմիջոց

Ապրանքաշրջանառության զարգացման հետ միասին նոր հարաբերություններ են առաջանում. ապրանքի ոտարումը կարող է նրա գնի իրացումից ժամանակո-րեն բաժանվել: Ապրանքները տարբեր ժամանակամի-ջոցներ են պահանջում իրենց արտադրման համար, տարվա տարբեր յեղանակներին են արտադրվում, մի

¹ Գանձերը:

² Իբրև առարկա:

քանիսը պետք է հեռավոր շուկաներ ուղարկվեն և այլն: Ա-ն կարող է այդ պատճառով վաճառորդ լինել, նախ-քան B-ն՝ գնորդը, վաճառչական լինել: Գործնական կյանքն այսպես է կարգավորում վաճառման պայման-ները: Ա-ն դառնում է վաճառու, B-ն՝ պատրաստ, փողը դառնում է վաճառված: Այսպիսով, վաճառու է պարտավանի հարաբերությունը դառնում է արդեն հակառակ (այդ հարաբերությունը կարող է հանդես գալ նաև ապրանքաշրջանառությունից անկախ, որինակ՝ անտիկ աշխարհում և միջնադարում). p. 97 (93) [102]:

Այս հարաբերություն մեջ փողը գործում է 1) իբրև արժեզանք՝ վաճառված ապրանքի գինը վերադարձնելու, 2) իբրև իրական գնման միջոց: Գանձի դեպքում փողը շրջանառությունից հանվեց, այստեղ, վաճառման-ընթացի դեպքում, Փ-ն մտնում է շրջանառության մեջ, բայց միայն այն ժամանակ, յերբ Ա-ն նրանից դուրս է յեկել: Պարտապան գնորդը վաճառում է, վերադարձի վճարել կարողանա, այսպես նրա գույքը հրապարակա-կան աճուրդով կվաճառվի: Փողն այսպիսով դառ-նում է վաճառքի ինֆանտայա՝ մի հասարակական անհրաժեշտություն շնորհիվ, վերը հենց շրջանառու-թյան պրոցեսի հարաբերություններից է բխում. p. 97—98 (94) [103—104]:

Առքերի և վաճառքների միաժամանակությունը¹, վերն առաջ է բերում փողի իբրև վաճառման միջոցի ֆունկ-ցիան, միաժամանակ գլուխ է բերում շրջանառություն միջոցների տնտեսում, վաճառումների համակենտրոնա-ցում մի վերոջ տեղում: Virements²-ը կրոնում միջին

զարեբում՝ clearing hous¹-ի նման մի բան, վերադարձ վճարվում էր փոխադարձ պահանջների միայն saldo²-ն. p. 98 (95) [104]:

Վերջապիով վաճառումները հավասարակշռվում են, փո-ղը գործում է լոկ իրական, իբրև հաշվադրամ կամ արժեզանք: Վերջապիով իրական վաճառումներ պետք է կատարել, փողը հանդես է գալիս լիակալ թե իբրև շրջա-նառություն միջոց, լիակալ թե իբրև նյութափոխանակու-թյան լոկ անցողիկ և միջնորդող ձև, այլ իբրև հասա-րակական աշխատանքի անհատական մարմնավորում, իբրև փոխանակարժեքի ինքնուրույն ազդոյ, իբրև բա-ցարձակ ապրանք: Այս շնորհիվ հակառակորդներ յե-րևան է գալիս արտադրության և առևտրի ճգնաժա-մերի այն մոմենտին, վեր կոչվում է փողային ճգնաժամ:

Սա միայն այնտեղ է պատահում, վերադարձի լիակալ զարգացած են վաճառումների գործող շղթան և նրանց հավասարեցման մի արվեստական սխեմա: Այս մեխա-նիզմի ավելի ընդհանրական խանգարումների դեպքում, վերադարձից ել վեր նրանք ծագած լինեն, փողը հանկար-ծակի է անմիջորեն հաշվադրամի լոկ իրական կեր-պարանքից փոխարկվում է կարծի փողի, դառնում է սովորական ապրանքներով անփոխարինելի. p. 99 (95) [105]:

Վարկադրամը ծագում է փողի՝ իբրև վաճառման միջոցի ֆունկցիայից. պարտադրերն իրենք շրջան են գործում պարտապահանջների փոխանցման համար: Վարկային գործի ծավալումով նորից ընդարձակվում է փողի իբրև վաճառման միջոցի ֆունկցիան. իբրև այդպիսին նա ստա-

¹ Հաշվահարդարի պալատ:

² Տարբերություն:

¹ Նշելով ձևադրում՝ «անմիաժամանակությունը»:

² Դրամական գումարի փոխանցումը մի հաշվից մյուսին:

նում ե սեփական գոյաձևեր, վորոնցով նա բուն ե դնում խոշոր առևտրագործարքների վորորտում, մինչդեռ ստակը հետ ե մղվում գլխավորապես մանր առևտրի վորորտը. p. 101 (96) [106]:

Ապրանքարտադրության վորոշ բարձրության ե ծավալի ժամանակ փողի իբրեւ վճարամիջոցի ֆունկցիան տարածվում ե ապրանքաշրջանառության վորորտից դուրս, նա դառնում ե պայմանադրությանց ընդհանրական ապրանք: Ռեմեսսներ, հաքիեր և այլն բնամտապարտումից դառնում են դրամավնագում: Հմմտ. Ֆրանսիան Լուի XIV-ի որով (Boisguillebert և Vauban¹): Դրա հակառակը՝ Ասիան, Թյուրքիան, Ճապոնիան և այլն. p. 102 (98) [107]:

Փողի, իբրեւ վճարամիջոցի, զարգացումն անհրաժեշտ ե դարձնում փողի կուտակումը պարտքերի մարման ժամկետների համար—գանձակազմումը, վոր հասարակության հետագա զարգացման ընթացքում չքանում ե իբրեւ հարստացման ինքնուրույն ձև, նորից յերևան ե դալիս իբրեւ վճարամիջոցների պահեստաֆոնդ. p. 103 (100) [109]:

с. Համաշխարհային փող

Համաշխարհային շրջանառության մեջ թոթափվում են ստակի, մանրուն ստակի, արժենիշների տեղական ձևերը, և փողի լուկ ձուլաձևն ե, վոր ուժ ունի իբրեւ համաշխարհային փող: Միայն համաշխարհային տուրքում ե, վոր փողը գործում ե լիովին իբրեւ այնպիսի ապրանք, վորի բնածնը միաժամանակ մարդկային ախտաբանքն in abstracto² իրականացնելու անհնարին

հասարակեացն ձևն ե: Նրա գոյության յեղանակը դառնում ե նրա գաղափարին աղեքլատ. p. 104 (100) [109]: (Մանրամասները p. 105) [110—111]:

¹ Բուազիլիեր և Վոբան:

² Վերացականորեն:

ՓՈՂԻ ԿԱՊԻՏԱԼ ԴԱՌՆԱԼԸ

1. ԿԱՊԻՏԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՖՈՐՄՈՒԼԱՆ

Ապրանքաշրջանառությունը կապիտալի յերակետն է։ Այդ պատճառով ապրանքարտադրությունը, ապրանքաշրջանառությունն ու նրա զարգացումը՝ առևտուրը, ամենուրեք կապիտալի ծագման պատմական նախադրյալներն են։

Կապիտալի արդի կյանքի պատմությունն սկսվում է արդի համաշխարհային առևտրի ու համաշխարհային շուկայի սկզբնավորությունից XVI դարում. p. 106 (104) [113]։

Յեթե դիտենք տնտեսական այն ձևերը միայն, վորոնք առաջանում են ապրանքաշրջանառությունից, ապա կոեսենսը, վոր սրա վերջին արդյունքը փողն է. և սա կապիտալի առաջին յերակետն է։ Պատմականորեն կապիտալը հանդիպադրվում է հողային սեփականությանը միշտ ել նախ իբրև դրամագույժ, վաճառականական կապիտալ և վաշխառուական կապիտալ, և դեռ այժմ ել ամեն մի նոր կապիտալ բնմ է յերևում փողի կերպարանքով, վորը պետք է վորոշ պրոցեսի միջոցով կապիտալ դառնա։

Փողն իբրև փող և փողն իբրև կապիտալ սկզբում տարբերվում են շրջանառության իրենց տարբեր ձևով միայն։

Ա.—Փ.—Ա.—ի կողքին հանդես է գալիս նաև Փ.—Ա.—

Փ ձևը՝ գնումը վաճառման համար։ Փողը, վոր իր շարժման միջոցին շրջանառության այս ձևն է կատարում, դառնում է կապիտալ, կապիտալ է արդեն ըստինքյան, այսինքն իր կոչումով։

Փ—Ա.—Փ.—ի հետևանքը փողի անուղղակի փոխանակումն է փողի հետ։ Յես 100 ֆուլետ ստերլինգով բամբակ եմ գնում և վաճառում եմ 110 ֆուլետ ստերլինգով. վերջիվերջո յես փոխանակած եմ լինում 100 ֆ. ստ.—ը 110 ֆ. ստ.—ի հետ, փողը փողի հետ։

Յեթե այս պրոցեսի հետևանքն այն լիներ, վոր միևնույն դրամարժեքն ստացվեր, ինչ վոր սկզբնական ներդրված եր՝ 100 ֆ. ստ. 100 ֆ. ստ.—ից, ապա այդ անհեթեթ կլիներ։ Սակայն անկախ նրանից, թե վաճառականն իր 100 ֆ. ստերլինգի համար 100 ֆ. ստ., 110 ֆ. ստ., թե միայն 50 ֆ. ստերլինգ է ստանում, նրա փողն այնուամենայնիվ մի յուրահատուկ շարժում է կատարած լինում, վորը միանգամայն տարբեր է Ա.—Փ.—Ա. ապրանքաշրջանառությունից։ Այս շարժման և Ա.—Փ.—Ա. շարժման միջև յեղած ձևային տարբերության քննությունից կստացվի նաև ըովանդակության տարբերությունը։

Պրոցեսի յերկու փուլերից յուրաքանչյուրը նույնն է, ինչ վոր Ա.—Փ.—Ա.—ի մեջ։ Բայց ամբողջական ընթացքի մեջ մեծ տարբերություն կա։ Ա.—Փ.—Ա.—ի մեջ փողը միջնորդն է, ապրանքը՝ յերակետն ու վերջնականը. այստեղ Ա.—ն միջնորդն է, Փ.—ն յերակետն ու վերջնականը։ Ա.—Փ.—Ա.—ի մեջ փողը վերջնականորեն ծախսվում է, Փ.—Ա.—Փ.—ի մեջ՝ միայն կամխավնալվում, նա պետք է նորից ձեռք բերվի։ Փողը հետ է հոսում գնալի իր յեղակեսը—ուրեմն այստեղ արդեն զգայապես ըմբռնելի տարբերություն կա—արդյոք փողն իբրև

փող է շրջանառության մեջ, թե փողն իբրև կապիտալ է շրջանառության մեջ:

Ա.—Փ.—Ա.—ի մեջ փողը կարող է հետ հոսել դեպի իր յեղակեալը ամբողջ պրոցեսի կրկնութեամբ միայն, նոր ապրանքներ վաճառելու միջոցով. հետհոսումն ուրեմն անկախ է պրոցեսից իրենից: Փ.—Ա.—Փ.—ի մեջ, ընդհակառակը, հետհոսումն սկզբից և յեթ պայմանավորված է պրոցեսի բնույթով: այդ պրոցեսը լրիվ չի լինում, յեթե հետհոսումը չի հաջողվում. p. 110 (107) [115]:

Ա.—Փ.—Ա.—ի վերջնական նպատակը սպառարժեքն է, Փ.—Ա.—Փ.—ինք՝ հենց փոխանակութեամբ:

Ա.—Փ.—Ա.—ի մեջ յերկու ծայրանդամներն ել միևնույն տնտեսական ձևորոշությունն ունեն: Նրանք յերկուսն ել ապրանքներ են, վորոնք հավասար սեփականության տարբեր սպառարժեքներ են, և պրոցեսի բովանդակությունը հասարակական նյութափոխանակությունն է: Փ.—Ա.—Փ.—ի մեջ գործառնությունն առաջին հայացքից թվում է նույնաբանական, անբովանդակ: 100 Փ. ստերլինգը 100 Փ. ստերլինգի հետ փոխանակելը և այն ել անուղղակի ճանապարհով, թվում է անհեթեթ: Մի դրամագումար կարող է մի ուրիշից միայն իր մեծությամբ տարբերվել. այդ պատճառով Փ.—Ա.—Փ.—ն իր բովանդակությունն ստանում է ծայրանդամների փոխանակումն ապրանքային շրջանառությունից ավելի շատ փող է դուրս կորդվում, քան նրա մեջ նետված էր: 100 Փ. ստերլինգով գնված բամբակը վաճառվում է որինակ՝ 100+10 Փունտ ստերլինգով. պրոցեսն ուրեմն ստանում է այս ձևը՝ Փ.—Ա.—Փ' վորտեղ Փ'=Փ+ΔՓ: Այս Δ Փ-ն, այս անք,

հավելարժեքն է: Սկզբնական կանխավճարված արժեքը մեջ միայն պահպանվում է շրջանառության մեջ, այլ և իրեն կցում է մի հավելարժեք, նա անում է, և այս օտարումը փողը դարձնում է կապիտալ:

Ա.—Փ.—Ա.—ի մեջ ևս կարող է ծայրանդամների արժեքային տարբերություն լինել, բայց շրջանառության այս ձևի համար այդ դուռ պատահական բան է, և Ա.—Փ.—Ա.—ն անիմաստ չի դառնում, յերբ ծայրանդամները հավասարարժեք են,—ընդհակառակը, սա ավելի շուտ նորմալ ընթացքի պայմանն է:

Ա.—Փ.—Ա.—ի կրկնությունն իր չափ ու սահմանն է գտնում նրանից դուրս գտնվող մի վերջնականատակի մեջ, սպառման մեջ, վորոշակի պահանջների բավարարման մեջ. Փ.—Ա.—Փ.—ի մեջ, ընդհակառակը, սկիզբն ու վերջը միևնույնն են, փող են, և արդեն սրա հետևանքով ել շարժումն անվերջ է: Հարկավ Փ+ΔՓ-ն քանակով տարբեր է Փ-ից, բայց և այնպես նա լուրջ առնականափակ մի դրամագումար է. յեթե նա ծախսվել, ապա կգազարել կապիտալ լինելուց. յեթե նա շրջանառությունից դուրս բերվել, ապա նա կքարանար իբրև զանձ: Արժեքի աճման պահանջը նույնպես գոյություն ունի Փ-ի համար, ինչպես վոր Փ-ի համար, և կապիտալի շարժումը սահման չունի, վորովհետև նրա նպատակը պրոցեսի վերջում նույնքան հեռու չէ գտնվում, վորքան և սկզբում. p. 111, 112 (108, 109) [116—118]: Իբրև այս պրոցեսի կրող՝ դրամատերը դառնում է կապիտալիստ: Յեթե փոխանակարժեքը ապրանքային շրջանառության մեջ, ապրանքի սպառարժեքի հակառակ, լավագույն դեպքում ինքնուրույն ձև է ընդունում, ապա նա այստեղ հանկարծակի ներկայանում է իբրև պրոցես կատարող, ինքն իրեն օտարող մի սուբյ-

տանց, վորի համար ապրանքը և փողը լոկ ձևեր են. դեռ
ավելին՝ նա իբրև սկզբնական արժեք, տարբերվում է
հենց իրենից իբրև հավելարժեքից: Նա դառնում է պրո-
ցես կատարող փող և իբրև այդպիսին՝ կապիտալ-
ը. 116 (112) [119]:

Թվում է, թե Փ—Ա—Փ-ն միայն վաճառականական
կապիտալին հատուկ ձև է: Բայց արդյունաբերական
կապիտալն էլ փող է, վոր ապրանք է դառնում և
վերջինիս վաճառքի միջոցով ավելի շատ փողի յե վե-
րափոխվում: Այն գործողությունները, վորոնք տեղի
յեն ունենում առօրե և վաճառքի միջև օրգանառարյան
փոխարկից դուրս, սրանից վոչինչ չեն փոխում: Վեր-
ջապես տոկոսաբեր կապիտալի մեջ պրոցեսն անմի-
ջորեն ներկայանում է Փ—Փ՝ տեսքով՝ իբրև արժեք,
վորն, ասես, ավելի մեծ է, քան հենց ինքը. ք. 117
(112) [122]:

2. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՖՈՐՄՈՒԼԱՅԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շրջանառության այն ձևը, վորով փողը կապիտալ
է դառնում, հակասում է ապրանքի, արժեքի, փողի և
հենց շրջանառության բնույթին վերաբերող նախըն-
թաց բոլոր որոնքներին: Կարող է հակադարձ հաջոր-
դականության գուտ ձևական տարբերությունն այս
առաջացնել:

Դեռ ավելին: Այս հակադարձությունը գոյություն
ունի յերեք գործող անձերից միայն մեկի համար:
Իբրև կապիտալիստ՝ յես գնում եմ ապրանքը Ա-ից և
նորից վաճառում եմ B-ին:

A-ն և B-ն հանդես են գալիս իբրև ապրանքի սոսկ
գնորդ ու վաճառորդ միայն: Յերկու դեպքում էլ նրանց

նկատմամբ յես սոսկ դրամատեր եմ կամ ապրանքա-
տեր, մեկի նկատմամբ իբրև գնորդ կամ փող, մյուսի
նկատմամբ իբրև վաճառորդ կամ ապրանք, բայց և վնչ
մեկի նկատմամբ իբրև կապիտալիստ կամ իբրև մի բա-
նի ներկայացուցիչ, վոր ավելին լինել, քան փողը
կամ ապրանքը: A-ի համար գործարքն սկսվեց մի
վաճառքով, B-ի համար նա վերջացավ մի առևով, ու-
րեմն ճիշտ այնպես, ինչպես ապրանքաշրջանառության
մեջ: Յեթե յես հավելարժեքի իմ իրավունքը հիմնում
եմ շարքերի միայն հաջորդականության վրա, ապա
A-ն կարող էր ապրանքը B-ին վաճառել ուղղակի, և
հավելարժեքի հնարավորությունը կվերանար:

Յենթադրենք A-ն և B-ն իրարից ապրանքներ են
գնում ուղղակի: Ինչ վերաբերում է սպառարժեքին,
յերկուսն էլ կարող են շահել: A-ն կարող է նույնիսկ
ավելի արտադրել իր ապրանքից, քան B-ն կարող
կլինի նույն ժամանակում արտադրել, և vice versa¹.
և էլ յերկուսն էլ շահում են: Սակայն այլ կերպ է
փոխանակարժեքի նկատմամբ: Այստեղ իրար հետա-
ժեքային հավասար մեծություններ են փոխանակվում,
յեթե նույնիսկ փողը միջամուխ է լինում իբրև շրջա-
նառության միջոց. ք. 119 (114) [122]:

Վերացականորեն դիտարկելով պարզ ապրանքաշրջ-
անառության մեջ, բացի մի սպառարժեքի մի ուրիշով
փոխարինելուց, տեղի յե ունենում ապրանքի մի ձևա-
փոխություն միայն: Վորչափով նա [ապրանքի շրջանա-
ռությունը] իր փոխանակարժեքի մի սոսկ ձևափոխու-
թյուն է պայմանավորում, նույն չափով նա պայմա-
նավորում է, յեթե յերեւոյթը զօսեմն է տեղի ունենում,

¹ Ընդհակառակը:

համարժեքների փոխանակություն: Ճիշտ է, ապրանքները կարող են այնպիսի գներով վաճառվել, վորոնք չեղվում են նրանց արժեքներից, բայց միայն այն դեպքում, յերբ ապրանքափոխանակության որևէքը խախտվում է: Իր դուռ կերպարանքով նա համարժեքների մի փոխանակություն է և ուրեմն հարստանալու միջոց չէ. ք. 120 (120) [124—125]:

Այստեղից է ծագում հավելարժեքն ապրանքաշրջանառությունից արտածելու բոլոր փորձերի սխալը: Կոնդրիլյակ. ք. 121 (115) [125]: Նյուման. ք. 122 (116) [126]:

Բայց յենթադրենք, վոր փոխանակությունը դողբեն չի կատարվում, վոր վոչ-համարժեքներ են փոխանակվում: Դիցուք ամեն մի վաճառողը իր ապրանքը 10 տոկոսով արժեքից բարձր է վաճառում: Ամեն ինչ նախկինն է մնում. ինչ վոր ամեն մեկն իբրև վաճառողը շահում է, նույնը նորից կորցնում է իբրև գնորդ: Ճիշտ այնպես, իբր թե դրամարժեքը 10 տոկոսով փոփոխված լիներ: Նույնը կլիներ, յեթե բոլոր գնորդներն ամեն ինչ 10 տոկոսով արժեքից ցած գնեյին. ք. 123 (117) [127] (Տոռենս): Այն ընդունույթը, վոր հավելարժեքը գների վրա հավելում կատարելուց է ծագում, յենթադրում է, վոր մի դասակարգ կա, վորը գնում է առանց վաճառելու, այսինքն սպառում է առանց տրեյդի, դեպի վորը շարունակ ձգտալու փող է հոսում: Այս դասակարգին ապրանքներն արժեքից բարձր վաճառել՝ միայն նշանակում է ձրիաբար տված փողի մի մասը խաբեյությունով հետ ստանալ (Փոքր Ասիա և Հռոմ): Վաճառողն այնուամենայնիվ միշտ խաբված է մնում և չի կարողանում ավելի հարստանալ, հավելարժեք ստեղծել:

Ընդունենք խաբելու դեպքը: A-ն վաճառում է B-ին 40 ֆ. ստերլինգի արժեք ունեցող գինի և փոխարենն ստանում է 50 ֆ. ստերլինգի արժեք ունեցող հացահատիկ: A-ն 10 ֆ. ստ. շահեց: Բայց A-ն և B-ն այնուամենայնիվ միասին ունեն միայն 90, A-ն ունի 50, իսկ B-ն միայն 40: Արժեքը փոխանցվեց, բայց չսեղծվեց: Մի յերկրի կապիտալիստների ամբողջ դասակարգը չի կարող շահվել իրեն իսկ խաբելու միջոցով. ք. 126 (119) [129]:

Ուրեմն, յեթե համարժեքներ են փոխանակվում, ապա վոչ մի հավելարժեք չի առաջանում, և յեթե վոչ-համարժեքներ են փոխանակվում, նույնպես վոչ մի հավելարժեք չի առաջանում: Ապրանքաշրջանառությունը նոր արժեք չի ստեղծում:

Այս պատճառով կապիտալի հնազույն և ամենից տարածված ձևերը՝ առևտրային կապիտալը և վաշխառուական կապիտալը, այստեղ մնում են քննությունից դուրս: Վորպեսզի առևտրային կապիտալի աճումը սոսկական խաբեբայություններով չբացատրվի, դրա համար հարկավոր են այստեղ գեղևս բացակայող մի շարք միջնանդամներ: Ավելի ևս՝ վաշխառուական և տոկոսաբեր կապիտալի գեպքում: Հետագայում կերևա, վոր յերկուսն ել ածանցական ձևեր են, այլև թե ինչն է նրանք պատմականորեն արդի կապիտալից առաջ են հանդես գալիս:

Հավելարժեքը չի կարող ուրեմն շրջանառությունից ծագել: Իսկ նրանից դուրս: Նրանից դուրս ապրանքատերն իր ապրանքի սոսկ արտադրողն է, և այդ ապրանքի արժեքը կախված է ապրանքատիրոջ կողմից ապրանքի մեջ դրած սեփական աշխատանքի մեծությունից, վորը չափվում է վորոշ հասարակական

որենքի համաձայն. այս արժեքն արտահայտվում է հաշվադրամի, որինակ՝ 10 ֆ. ստերլինգի, զնի մեջ: Բայց այս արժեքը միաժամանակ 11 ֆ. ստերլինգի արժեքը չէ. նրա աշխատանքն արժեքներ է ստեղծում, բայց վոչ ինքնաճուն արժեքներ: Նա կարող է առկա արժեքին նոր արժեք ավելացնել, բայց այս տեղի յե ունենում նոր աշխատանք ավելացնելու միջոցով միայն: Ուրեմն ապրանքն արտադրողը չի կարող օգտնառու-քյամ վոյորսից զուրա, առանց ուրիշ ապրանքատերերի հետ շփման մեջ մտնելու, հավելաբաժնի տրամադրել: Կապիտալը պետք է այդ պատճառով ծագի և ապրանքաշրջանառության մեջ և միաժամանակ վո՛չ նրա մեջ. p. 128 (122) [131]: Ուրեմն՝ փողի կապիտալ գառնալը պետք է զարգացվի ապրանքափոխանակությանը իմա-նենա՞տ որենքների հիման վրա, այնպես վոր համար-ժեքների փոխանակությանը պետք է յեղակետ լինի: Մեր դրամատերը, վոր դեռ կապիտալիստի թրթուր է միայն, պետք է ապրանքներն իրենց արժեքով զնի, իրենց արժեքով վաճառի և այնուամենայնիվ պրո-ցեսի վերջում ավելի մեծ արժեք դուրս կորզի, քան նետել եր նրա մեջ: Նրա թիթեռ գառնալը պետք է տեղի ունենա շրջանառության փոխոտում և պետք է տեղի ունենա վոչ նրա մեջ: Մրանք են պրոբլեմի պայմանները: Hic Rhodus, hic salta! ¹ p. 129 (122) [132]:

3. ԱՇԽԱՏՈՒԹԻ ԳՆՈՒՄՆ ՈՒ ՎԱՃԱՌՈՒՄԸ

Այն փողի արժեքի փոփոխությունը, վորը պետք է

¹ Բառացի՝ այստեղ և հոդոսը, այստեղ ցատկիւր (պարիւր). ընդարձակ իմաստով՝ այստեղ պատահություն ունեա, այստեղ ցույց տուր, ինչ վոր կարող ես:

կապիտալ գառնա, չի կարող տեղի ունենալ հենց փո-ղի մեջ, վորովհետեւ գնման մեջ նա իրացնում է ապ-րանքի գինը միայն և մյուս կողմից, քանի դեռ նա վաղ է սնում, իր արժեքմեծությունը չի փոխում, և վաճառման մեջ ևս ապրանքը նրա ընաճեից նրա դրամաձեւին է փոխարկում միայն: Փոփոխությունը պետք է տեղի ունենա ուրեմն Փ—Ա—Փ-ի ապրաճեի մեջ, բայց վոչ նրա փոխանակարժեքի մեջ, քանի վոր համարժեքներ են փոխանակվում, այլ նա կարող է ծագել միայն ապրանքի սպառաճեից վորպես աղ-պիսուց, այսինքն նրա գործածումից: Դրա համար պա-հանջվում է մի ապրանք, վորի սպառարժեքը փոխա-նակարժեքի աղբյուր լինելու հատկությունն ունի, և նա գոյություն ունի, նա աշխատում է. p. 130 (123) [132—133]:

Սակայն վորպեսզի դրամատերը շուկայում աշխա-տուժը իբրեւ ապրանք գտնի, պետք է աշխատուժն իր սեփական տիրոջ կողմից ծախվի, հետեւաբար ազատ աշխատուժ լինի: Քանի վոր յերկուսն ել՝ գնորդն ու վաճառորդը, պայմանադրվողները, իրավաճախաբան-ձեւ են, ապա աշխատուժը պետք է միայն մի վորոճ ժամանակի համար վաճառվի, վորովհետեւ en bloc ¹ վաճառելու դեպքում վաճառորդն այլեւ վաճառորդ չի մնում, այլ ինքն ապրանք է դառնում: Այնուհետեւ աշ-խատուժի տերը փոխանակ այնպիսի ապրանքներ ծա-խել կարողանալու, վորոնց մեջ առարկայացված է նրա աշխատանքը, պետք է, ընդհակառակը, այնպիսի վի-ճակում լինի, վոր ստիպված լինի իր իսկ աշխատումն իբրեւ ապրաճե վաճառելու. p. 131 (123) [133—134]:

¹ Ամբողջությամբ:

Փողը կապիտալ գարձանելու համար դրամատերը պետք է ուրեմն ապրանքաշուկայում առկա գտնի ազատ բանվորին, ազատ այն յերկակի իմաստով, վոր նա, իբրև ազատ անձ, իր աշխատութիւն տնօրինում է իբրև իր ապրանքը, և վոր նա, մյուս կողմից, վաճառելու ուրիշ ապրանքներ չունի, դափ-դատարկ է, ազատ այն բոլոր առարկաներից, վորոնք անհրաժեշտ են նրա աշխատութիւն իրացնելու համար. p. 132 (125) [134].

Ի միջի այլոց, գրամատիրոջ և աշխատութի տիրոջ հարաբերութիւնը բնական կամ բոլոր ժամանակներին վերաբերող հասարակական հարաբերութիւնն է, այլ պատմական հարաբերութիւնն, բազմաթիւ տնտեսական հեղաշրջումների արդյունք: Այսպես, նաև մինչև այժմ դիտարկված տնտեսական կատեգորիաներն իրենց պատմական կնիքն ունեն: Ապրանք դառնալու համար արտադրանքը չպետք է այլևս իբրև անմիջական դոյւմիջոց արտադրվի: Արտադրանքների մասսան կարող է ապրանքաձև ընդունել արտադրութեան միայն մի վտրոշ յեղանակի, կապիտալիզացիան յեղանակի, շրջանակներում, թեպետ ապրանքարտադրութիւնն ու ապրանքաշրջանառութիւնն արդեն կարող են տեղի ունենալ այնտեղ, վորտեղ արտադրանքների մասսան յերբեք ապրանք չի դառնում: Փողը կարող է ditto¹ այն բոլոր ժամանակաշրջաններում գոյութիւն ունենալ, վորոնք ապրանքաշրջանառութեան վորոշ բարձրութեան են հասել. առանձին գրամաձևերը՝ սոսկական համարժեքից մինչև համաշխարհային փողը, զարգացման տարբեր աստիճաններ են յենթադրում, բայց և այնպես շատ թույլ զարգացած ապրանքաշրջանառու-

¹ Նույնպէս:

թիւնն անգամ կարող է այդ բոլոր ձևերն առաջացնել: Կապիտալն, ընդհակառակը, ծագում է միայն այն դեպքում, յերբ վերի պայմանը տեղի ունի, և այսմեկ պայմանը մի համաշխարհային պատմութիւնն է ընդգրկում. p. 133 (125) [135].

Աշխատութիւն ունի մի փոխանակարժեք, վորը վորոշվում է, ինչպես մյուս բոլոր ապրանքներինը, իր արտադրման, հետևաբար նաև վերարտադրման համար անհրաժեշտ աշխատատեմանակով: Աշխատութի արժեքն այն կենսամիջոցների արժեքն է, վոր անհրաժեշտ է աշխատութի տիրոջ գոյութիւնը պահպանելու, և այն էլ նորմալ աշխատունակութեան մեջ պահպանելու, համար: Վերջինս կախած է կլիմայից, բնապայմաններից և այլն, ինչպես և պատմականորէն ամեն մի յերկրում տված standard life¹-ից: Նրանք [կենսամիջոցները] փոփոխվում են, բայց մի վորոշ յերկրի և մի վորոշ ժամանակաշրջանի համար նրանք տված են: Այնուհետև նա [նորմալ աշխատունակութիւնը] պարունակում է փոխադրմանը, այսինքն յերկրների, կենսամիջոցները, այնպես վոր այս յուրահատուկ ապրանքատերերի ցեղը հավերժանում է. այնուհետև կըրթութեան ծախքերը, յեթե աշխատանքը վորակյալ է. p. 135 (127) [136—137].

Աշխատութի արժեքի նվազագոյն սահմանը ֆիզիկապէս անհրաժեշտ կենսամիջոցների արժեքն է: Յեթե աշխատութի դինն ընկնում է մինչև այս միջիմումը, ապա նա ընկնում է նրա [աշխատութի] արժեքից ցած, վորովհետև վերջինս յենթադրում է աշխատութի նորմալ լավորակութիւն, վորչ հյուծված աշխատութ. p. 136 (128) [138].

¹ Կյանքի մակարդակից:

Աշխատանքի ընտելությունը պարունակում է այն, վոր աշխատուժը բանեցվում է պայմանադրություն կնքելուց հետո միայն, և վորովհետև այսպիսի ապրանքները համար փողը մեծ մասամբ վնասա իջոց է, ապա կապիտալիստական արտադրանքի ունեցող բոլոր յերկիրներում աշխատուժը վճարվում է նրա գործելուց հետո միայն: Ամեն տեղ ուրեմն բացփառ վարկառում է կապիտալիստից. p. 137, 138 (129) [139]:

Աշխատուժի սպառման պրոցեսը միաժամանակ ապրանքի և հավելարժեքի արտադրման պրոցեսն է, և այս սպառումը տեղի յե ունենում շրջանառության վոլտրտից դուրս. p. 140 (131) [140]:

III ԳԼՈՒԽ
ԲԱՑԱՐՁԱԿ ՀԱՎԵԼԱՐԺԵՔԻ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՐՈՑԵՍԸ ՅԵՎ ԱՐԺԵՄԵԾԱՑՄԱՆ
ՊՐՈՑԵՍԸ

Աշխատուժի գնորդն սպառում է այն, յերբ վաճառորդին հարկադրում է աշխատել: Այս աշխատանքը, ապրանք ներկայացնելու համար, նախ սպառարժեք է ներկայացնում և այս հատկության մեջ անկախ է կապիտալիստի ու բանվորի միջև գոյություն ունեցող առանձնահատուկ հարաբերությունից: Աշխատանքի պրոցեսի իբրև այդպիսու նկարագրությունը p. 141—149 (133—140) [143—151]:

Կապիտալիստական հիմքի վրա աշխատանքի պրոցեսը յերկու առանձնահատկություններ ունի—1) բանվորն աշխատում է կապիտալիստի հսկողության տակ, 2) արտադրանքը կապիտալիստի սեփականությունն է, վորովհետև աշխատանքի պրոցեսն այժմ կապիտալիստի կողմից գնված յերկու իրերի, աշխատուժի և արտադրամիջոցների, մի պրոցես է միայն. p. 150 (140) [151]:

Բայց կապիտալիստը չի ցանկանում սպառարժեքը՝ արտադրած վառպես ալդպիսին, այլ վորպես փոխանակարժեքի կրող միայն և հատկապես վորպես հավելարժեք: Աշխատանքն այս պայմանի դեպքում, յերբ ապրանքը սպառարժեքի և փոխանակարժեքի միասնություն էր,

դառնում է արտադրության պրոցեսի և արժեմի ծացման պրոցեսի միասնություն. p. 151 (140) [152]:

Ուրեմն պետք է հետադոտել արտադրանքի մեջ առարկայացված աշխատանքի քանակը:

Որինակ՝ մանածը: Դիցուք մանածը պատրաստելու համար հարկավոր է 10 ֆունտ բամբակ, վորի արժեքն է, ասենք, 10 շիլինգ, և աշխատամիջոցները համար, վորոնց անխուսափելի մաշումը մանելու ընթացքում այստեղ կարճ ներկայացված է իլիկամասով, ասենք, 2 շիլինգ: Այսպիսով արտադրանքի մեջ 12 շիլինգ կընկնեն արտադրամիջոցներին, այսինքն յեթե արտադրանքը դարձել է մի իրագոն սպառարժեք, — այս դեպքում՝ մանած, և 2 շիլ. — յեթե այդ աշխատամիջոցներին մեջ ներկայացված էր միայն հասարակականորեն անհրաժեշտ աշխատաժամանակը: Ինչքան է նրան [արժեքին] ավելացվում մանելու աշխատանքով:

Այստեղ ուրեմն աշխատանքի պրոցեսը դիտվում է բոլորովին այլ կողմից. արտադրանքների արժեքի մեջ բամբակաբույծի, իլիկագործի և ուրիշների ու մանածագործի աշխատանքը, իբրև հաժապելի մասեր, վորակապես հավասարեցված են ընդհանուր մարդկայնորեն անհրաժեշտ արժեքներով աշխատանքին — ուրեմն նրանք միայն քանակապես են համապատասխան և հենց այդ պատճառով փոխարկվում րմբոսեթի ժամանակի տեղողություն միջոցով, յեթե միայն վերջինս հասարակականության անհրաժեշտ արժեքներն աշխատաժամանակն է, վորովհետև միայն սա յե արժեք ստեղծում:

Յենթադրենք, վոր աշխատուժի որակն արժեքը = 3 շիլինգի և վոր վերջինս 6 աշխատաժամ է ներկայացնում, վոր 1 ժամում $1\frac{2}{3}$ ֆունտ մանած են անում, այսինքն 6 ժամում — 10 ֆունտ մանած՝ 10 ֆունտ

բամբակից (ինչպես վերը). այս դեպքում 6 ժամվա ընթացքում 3 շիլինգի արժեք է միացվում, և արտադրանքի արժեքն է 15 շիլինգ (10 շիլ. + 2 շիլ. + 3 շիլ.) կամ 1 շիլ. 6 պենս՝ մանածի 1 ֆունտի համար:

Բայց այստեղ հավելարժեք չկա: Այս չի կարող կապիտալիստին դոնացնել:

(Գոհնիկ տնտեսագիտություն զատարկախոսությունները... p. 157) (146) [157]:

Մենք յենթադրեցինք, վոր աշխատուժի որակն արժեքը 3 շիլինգ է, վորովհետև նրա մեջ առարկայացված է $1\frac{1}{2}$ աշխատուժի կամ 6 ժամ: Բայց այս $1\frac{1}{2}$ աշխատուժի, վորը լիկ անհրաժեշտ է բանվորի կյանքի 24 ժամվա րեքացում պահպանելու համար, բնավ արգելի չի հանգիստանում, վոր հա $1\frac{1}{4}$ ու աշխատուժի արժեքի և նրա ոգստագործումը յերկու տարբեր մեծություններ են: Նրա ոգստագործ հատկությունը միայն մի *conditio sine qua non*¹ էր, մինչդեռ վճարական նշանակություն ունեցավ աշխատուժի առանձնահատկ սպառարժեքը, վորով նա ավելի մեծ փոխանակարժեքի աղբյուր է լինում, քան հենց ինքն ունի. p. 159 (148) [159]:

Բանվորն աշխատում է ուրեմն 12 ժամ, մանելու վրա ծախսում է 20 ֆունտ բամբակ = 20 շիլինգի, և 4 շիլինգի իլիկներ, աշխատանքն էլ արժե 3 շիլինգ = 27 շիլինգի: Բայց արտադրանքի մեջ առարկայացված են՝ 4 աշխատուժի իլիկները և բամբակը, մանածագործի 1 աշխատուժի, ընդամենը 5 ու 6-ական շիլինգով = 30 շիլինգի, վոր առադրանքի արժեքն է. Առաջացավ 3 շիլինգի հավելարժեք, վորը կապիտալ դարձավ:

¹ Անհրաժեշտ պայման:

р. 160 (149) [160]: Պրորբեմի բոլոր պայմանները կատարված են: (Մանրամասները р. 160 (149) [160]:

Արժեմեծացման պրոցեսը աշխատանքի պրոցեսն է իբրև արժեկազմության պրոցես, հենց վոր յերկարացվում է այն կետից դեռ, վորտեղ նա տալիս է աշխատուժի վճարած արժեքի պարզ համարժեքը:

Արժեկազմության պրոցեսն աշխատանքի պարզ պրոցեսից նրանով է տարբերվում, վոր վերջինս դիտվում է վորակական կողմից, առաջինը քանակական կողմից, այն էլ միայն այն չափով, վորչափով նա հասարակականորեն անհրաժեշտ աշխատաժամանակ է պարունակում. р. 161 (149) [161]:

Մանրամասները՝ р. 162 (150) [162]:

Իբրև աշխատանքի պրոցեսի և արժեկազմության պրոցեսի միասնություն՝ արտադրությունն է, իբրև աշխատանքի պրոցեսի և արժեմեծացման պրոցեսի միասնություն՝ կապիտալիստական արտադրությունն պրոցեսն է. р. 163 (151) [162]:

Բարդ աշխատանքի վերածումը պարզի. р. 163—165 (152—153) [163—164]:

2. ՀԱՍՏԱՏՈՒՆ ՅԵՎ ՓՈՓՈԽՈՒՆ ԿԱՊԻՏԱԼ

Աշխատանքի պրոցեսն աշխատանքի առարկային նոր արժեք է միակցում, բայց միաժամանակ աշխատանքի պրոցեսի արժեքը փոխանցում է արտադրանքին, պահպանում է այն՝ նոր արժեքի սոսկական միակցումով: Այս կրկնակի հետևանքն այսպես է ստացվում. աշխատանքի յուրահատկորեն ոգտակար, վորակական ընդլայնման մի սպառարժեքը վերափոխում է մի այլ

սպառարժեքի և դրանով պահպանում է արժեքը. իսկ աշխատանքի արժեկազմ, վորացվածություն - քնդհանրական քանակական բնույթը արժեք է միակցում. р. 166 (154) [166]:

Որինակ՝ թող մանկու աշխատանքի արտադրողականությունը վեցապատկվի: Իբրև ոգտակար (վորական) աշխատանք նա պահպանում է միևնույն ժամանակի ընթացքում 6 անգամ ավելի աշխատամիջոցներ: Բայց նա միայն նույն նոր արժեքն է միակցում, ինչպես և առաջ, այսինքն մասնաժիյուրաքանչյուր ֆունտի մեջ պարունակվում է առաջվա միակցած նոր արժեքի $\frac{1}{6}$ -ը միայն: Նաև իբրև արժեկազմ աշխատանք նա ավելին չի կատարում, քան առաջ. р. 167 (155) [166]:

Հակառակն է լինում, յերբ մանկու աշխատանքի արտադրողականությունը նույնն է մնում, իսկ աշխատամիջոցի արժեքը բարձրանում է. р. 168 (155) [166]:

Աշխատամիջոցը միայն այն արժեքն է փոխանցում արտադրանքին, վոր նա ինքը կորցնում է. р. 169 (156) [168]: Այս տեղի յե ունենում տարբեր աստիճանով: Ածուխը, քսելու նյութերը և այլն ամբողջովին են ծախսվում: Հումքերը նոր ձև են ընդունում: Գործիքները, մեքենաները և այլն, միայն զանգաղորեն և մաս-մաս են իրենց արժեքը փոխանցում, և նրանց մաշումը հաշվում են փորձի հիման վրա. р. 169, 170 (156, 157) [168]: Գործիքը շարունակ մնում է ամբողջովին աշխատանքի պրոցեսի մեջ: Այստեղ ուրեմն միևնույն գործիքն աշխատանքի պրոցեսի մեջ ամբողջովին է մտնում, իսկ արժեմեծացման պրոցեսի մեջ՝ միայն մասամբ, այնպես վոր յերկու պրոցեսներին

տարբերությունն անդրադառնում եւ առարկայական գործոններէ վրա. p. 171 (158) [169]: Ընդհակառակը, հումքը, վոր թափուկ եւ տալիս, ամբողջովին մտնում եւ արժեմեծացման պրոցեսի եւ աշխատանքի պրոցեսի մեջ, վորովհետեւ նա, թափուկը հանած, յերեւան ե գալիս արտադրանքի մեջ. p. 171 (158) [170]:

Վոչ մի դեպքում չի կարող սակայն աշխատամիջոցն ավելի փոխանակարժեք փոխանցել, քան ինքն ունենէր—նա աշխատանքի պրոցեսում ծառայում ե լոկ իբրեւ սպառարժեք եւ այդ պատճառով կարող ե միայն այն փոխանակարժեքը փոխանցել, վորն առաջուց արդեն ունենէր. p. 172 (159) [170]:

Արժեքի այս պահպանումը, վորը շատ թանգ ե կապիտալիստի համար, նրան վոչինչ չի նստում. p. 173, 174 (160, 161) [171]:

Այնինչ պահպանված արժեքը միայն նորից ե յեւեւան գալիս, նա կար, ե միայն աշխատանքի պրոցեսը նոր արժեք ե միակցում, այն ե կապիտալիստական արտադրության մեջ հավելարժեքը՝ արտադրության արժեքի ավելցուկը գործադրած արտադրանքական գծիչների (արտադրամիջոցների ե աշխատուժի) արժեքի նկատմամբ. p. 175, 176 (161, 162) [173]:

Սրանով բնորոշված են այն գոյաձեւերը, վոր սկզբնական կապիտալային արժեքը ընդունում ե իր դրամաձեւը դեն նեւտրիս, յերբ նա փոխարկվում ե աշխատանքի պրոցեսի գործոնների՝ 1) աշխատամիջոցների գնումով ե 2) աշխատուժի գնումով:

Աշխատամիջոցների մեջ դրված կապիտալն ուրեմն չի փոխում իր արժեքի մեծությունը արտադրության պրոցեսում. մենք այն անվանում ենք հաստատուն կապիտալ:

Աշխատուժի մեջ դրված մասը փոխում ե իր արժեքը, արտադրում ե 1) իր սեփական արժեքը ե 2) հավելարժեքը. մենք այն անվանում ենք փոփոխուն կապիտալ. p. 176 (162) [173—174]:

Կապիտալը հաստատուն ե արտադրության հատկապես տվյալ պրոցեսի նկատմամբ, վորի մեջ նա չի փոփոխվում. նա կարող ե մերթ ավելի շատ, մերթ ավելի քիչ աշխատամիջոցներից բաղկացած լինել, ե դնած աշխատամիջոցների արժեքն ել կարող ե բարձրանալ կամ ընկնել, բայց այդ չի շոշափում նրանց հարաբերությունը արտադրության պրոցեսի նկատմամբ. p. 177 (162) [175]: Նմանապես կարող ե փոխվել այն տոկոսային հարաբերությունը, վորով մի տվյալ կապիտալ տրոհվում ե հաստատուն ե փոփոխուն կապիտալի, բայց ամեն մի տվյալ դեպքում c -ն մնում ե հաստատուն ե v -ն փոփոխուն. p. 178 (163) [175]:

3. ՀԱՎԵԼԱՐԺԵՔԻ ՆՈՐՄԱՆ

$c = 500$ ֆ. ստ. $= 410 + 90$: Աշխատանքի պրոցեսի վերջում, վորի մեջ v -ն աշխատուժի յի փոխարկվում, դիցուք ստացվում ե $410 + 90 + 90 = 590$: Յենթադրենք c -ն բաղկացած ե 312 ֆ. ստ.-ի հումքից, 44 ֆ. ստ.-ի ոժանդակ նյութերից ե 54 ֆ. ստ.-ի մեքենաների մաշումից $= 410$ ֆ. ստ.: Դիցուք բոլոր մեքենաների արժեքը կազմում ե 1054 ֆ. ստ.: Յենթ վերջինս ամբողջությամբ հաշվեյինք, ապա c -ի համար յերկու կողմում ել կստացվեր 1410 ֆ. ստ., հավելարժեքը կմնար, ինչպես ե առաջ, 90. p. 179 (164) [176]:

Քանի վոր c -ի արժեքն արտադրանքի մեջ միայն

նորից յերևան ե գալիս, ապա արտադրանքի համար ստացված արժեք տարբեր ե պրոցեսի ընթացքում ստացված արժեքային արտադրանքից. վերջինս ուրեմն վնչ թե հավասար ե $c + v + m$ -ի, այլ $= v + m$ -ի: Արժեքի ծագման պրոցեսի համար c -ի մեծությունն ուրեմն նշանակություն չունի, այսինքն $c = 0$. p. 180 (165) [177]: Նույնը տեղի յե ունենում նաև գործնականում,— յեթե մի կողմ թողնենք հաշվի վաճառականական յեղանակը,— որինակ՝ մի յերկրի շահույթն իր արդյունաբերությունից հաշվելիս, յերբ ներմուծած հումքը հաշվից հանում են. p. 181 (166) [178]: Թե հավելարժեքն ինչ հարաբերության մեջ ե ամբողջ կապիտալի հետ, այդ մասին անհրաժեշտը կարվի III գրքում: Ուրեմն հավելարժեքի նորման $= m : v$, վերը՝ $90 : 90 = 100\%$: Այն աշխատաժամանակը, վորի ընթացքում բանվորն իր աշխատուժի արժեքը վերարտադրում ե,— լինի կապիտալիստական թե ուրիշ հարաբերություններում,— անհրաժեշտ աշխատանքն ե. դրանից ավելին, վորը կապիտալիստի համար հավելարժեք ե առաջացնում, հավելյալ արժեքն ե. p. 183, 184 (167, 168) [181]: Հավելարժեքը շահած հավելաշխատանքն ե, ե վերջինս դուրս բամբուլ ձևն ե միայն տարբերում զանազան հասարակական ֆորմացիաները:

Հավելարժեքը սխալ հաշվելու որինակներ, հաշվի մեջ ներառելով c -ն. p. 185—196 (169—179) [182—192] (Սենյոր):

Անհրաժեշտ աշխատանքի ե հավելաշխատանքի գումարը $=$ աշխատանքի:

Անհրաժեշտ աշխատաժամանակը տրված ե: Հավելյալ աշխատանքը փոփոխուն ե, սակայն վորոշ սահմաններում: Նա յերբեք չի կարող լինել $= 0$ -ի, վորովհետև այդ դեպքում կապիտալիստական արտադրությունը դադարում ե: Նա յերբեք չի կարող 24 ժամի հասնել ֆիզիկական պատճառներով, բացի դրանից մեծագույն սահմանի վրա ազդեցություն են անում նաև բարոյական պատճառները: Բայց այս սահմանները խիստ առաձգական են: Տնտեսական պահանջն այն ե, վոր աշխատորն ավելի յերկար չլինի, քան յերբ նա բանվորին միայն նորմալ ե մաշում: Բայց ինչ ե նշանակում նորմալ: Այստեղ ստացվում $\bullet$ մի անտիսոմիա, ե միայն ուժը կարող ե վճռել: Այստեղից ել պայքարը բանվոր դասակարգի ե կապիտալիստների դասակարգի միջև նորմալ աշխատանքի համար. p. 198—202 (180—184) [193—197]:

Հավելյալ աշխատանքը նախկին հասարակական դարարյճաններում: Դրանի դեռ փոխանակարժեքն ավելի կարևոր չե, քան սպառարժեքը, հավելյալ աշխատանքն ավելի չափավոր ե, որինակ՝ հին ժողովուրդները մոտ. միայն այնտեղ, վորտեղ ուղղակի փոխանակարժեք—վոսկի ե արծաթ եր արտադրվում, հավելյալ աշխատանքը սոսկալի յեր. p. 203 [198]: Ditto¹ նաև Ամերիկայի ստրկատիրական նահանգներում մինչև բամբակի մասսայական արտադրությունն արտահանման համար: Ditto նաև ճորտային աշխատանքը, որինակ, Ռուսիայում:

Ճորտային աշխատանքը կապիտալիստական շա-

¹ Նույնպես:

հաղործման հետ բաղդատելու լավագույն միջոցն է, վորովհետև նա հավելյալ աշխատանքը ֆիքսացիայի յե յենթարկում և նշում:

Réglement organique¹ Վալախիայի. p. 204 — 206 (187—188) [200—201]: Ինչպես վոր վերջինս հավելյալ աշխատանքի ծարավի մի դրական արտահայտությունն է, այնպես էլ անդլիական Factory Acts² -ը բացասական արտահայտություններն են:

Factory Acts-ը: 1850 թվի որենքը. p. 207 (189) [202] սահմանում է՝ $10\frac{1}{2}$ ժամ և շաբաթ որը $7\frac{1}{2}$ ժամ = շաբաթական 60 ժամ: Գործարանատերերի շահույթը զանցառման միջոցով. p. 208—211 (189—192) [203—206]:

Շահագործումը սահմանափակումն չեմքարկված կամ միայն հետագայում սահմանափակման յենթարկված հյուղերում՝ ժանկային արդյունաբերությունը p. 212 (193) [207], կավագործությունը p. 213 (193) [207—209], լուցկեգործությունը p. 214 (195) [209], պատտադործությունը p. 214—217 (195—197) [210—211], հացագործությունը p. 217—222 (197—201) [211—216], յերկաթուղային պաեսոնյաները p. 223 (201) [216—217], կառուիները p. 223—225 (202—204) [217—219], դարբինները p. 226 (204) [219—220], ցերեկվա և գիշերվա բանվորներ shifts³ -ով a) մետաղագործությունը յեվ մետաղի արդյունաբերությունը p. 227—235 (205—212) [220—227]:

Այս իրողություններն ապացուցում են, վոր կա-

¹ Որդանական կանոնադրություն (կոռային աշխատանքներին որենքերի անունը):

² Գործարանային որենքներ:

³ Հերթափոխություններով:

պիտալը բանվորին դիտում է միայն վորպես աշխատ-
ձուծ, վորի ամբողջ ժամանակն աշխատաթոմանակ է, վորչափով վոր այս, թեկուզ միայն ժամանակավորապես, հնարավոր է, և վոր կապիտալիստի համար անտարբեր խնդիր է աշխատութի կյանքի տեղությունը. p. 236—238 (213—214) [228—230]:

Բայց այս դեմ չէ նույնիսկ կապիտալիստի շահերին: Ինչպես է արագորեն հյուծվածների փոխարինման խնդիրը: Կադակերաված ստրկավաճառությունը Միացյալ Նահանգների ներսում՝ ստրուկների արագ հյուծումը տնտեսական սկզբունք է դարձրել. ճիշտ նույնն է Յեվրոպայում գյուղական շրջաններից և այլ վայրերից բանվորներին հոսանք առաջացնելու նկատմամբ. p. 239 (215) [230—231]: Poorhouse-supply¹ p. 240 (216) [231—232]: Կապիտալիստը միայն տեսնում է իրեն միշտ տրամադրելի գերբնակչությունը և սպառում է նրան: Յեղի մահացումը նրան չի հետաքրքրում — après moi le déluge²: Կապիտալն անխնա յե բանվորի առողջության և կյանքի սեռության նկատմամբ, յեքե հասարակությունը նրան չի հարկադրում ուժադիր լինել դեպի այն... և ազատ մրցությունը հանդես է բերում կապիտալիստական արագությանը ներհասուկ որեմեները՝ իբրև հարկադրական տրամախն որեմե անհատ կապիտալիստի նկատմամբ. p. 243 (218) [234]:

Նորմալ աշխատողի սահմանումը հետևանք է բազմադարյան պայքարի կապիտալիստի և բանվորի միջև:

Սկզբում որենքներ եյին հրատարակվում աշխա-

¹ Աղքատախնամ տներին կողմից աշխատութ մատակարարելու:

² Ինձնից հետո՝ ջրհեղեղ:

տաժամանակը յերկարացնելու, իսկ այժմ՝ կարճացնելու համար. p. 244 (219) [234—235]:

Առաջինն եր Statute of labourers 23 Eduard III 1349¹, և այն պատրվակով, թե ժանտախտն այնպես է հնձել ազգաբնակչությանը, վոր ամեն վոք ավելի շատ պետք է աշխատի: Այդ պատճառով որենքով սահմանվում եր վարձի մաքսիմում և աշխատորի սահմանները: 1496 թվին Հինրի VII-ի որով յերկրագործական բանվորների և բոլոր արհեստավորների (artificiers) աշխատորը սահմանվում եր ամառվա ընթացքում—մարտից մինչև սեպտեմբեր—առավոտյան ժամի 5-ից մինչև յերեկոյան 7-ը և 8-ը՝ 1 ժամ, 1½ ժամ և 1½ ժամ=3 ժամ ընդմիջումներով: Ձմեռվա ընթացքում առավոտյան ժամի 5-ից մինչև մթնելը: Այս ստատուտը² յերբեկ խտորեն չի կիրառվել. նույնիսկ 18-րդ դարում շաբաթվա ամբողջ աշխատանքը դեռևս կապիտալի տրամադրության տակ չէ (բացառած յերկրագործական բանվորները): Տես այդ ժամանակի բանակոխվը. p. 248—251 (223—225) [238—242]:

Միայն խոշոր արդյունաբերությունը հաջողվեց այդ և ավելին. նա խորտակեց բոլոր սահմանները և սկսեց շահագործել բանվորին ամենաանամոթ կերպով: Պրուլետարիատն սկսեց դիմադրել, հենց վոր ուշքի յեկավ, 1802—1833 հրատարակված ակտերը³ անվանական եյին, վորովհետև տեսուչներ չկային: Միայն 1833-ի ակտը սահմանեց տեքստիլ արդյունաբերության չորս

¹ Կանոնադրություն բանվորների մասին, Եդուարդ III-ի 23-րդ տարին, 1349:

² Անգլիայում այդպես է կոչվում պառլամենտի հրատարակած որենքը:

³ Ակտը նույնն է, ինչ վոր ստատուտը:

ճյուղերում նորմալ աշխատոր՝ առավոտյան 5 ժ. 30 րոպեյից մինչև յերեկոյան 8 ժ. 30 րոպեն, վորի ընթացքում 13—18 տարեկան young persons¹-ը միայն 12 ժամ կարող են աշխատեցվել 1½ ժամ ընդմիջումով, 9—13 տարեկան յերեխաները միայն 8 ժամ, իսկ յերեխաների և young persons-ի գիշերային աշխատանքն արգելվում է. p. 253—255 (226—229) [243—244]: Relaissystem²-ը և նրա չարարկումը դանցադան նպատակով. p. 256 (229) [244]: Վերջապես 1844-ի ակտը, վորն ամեն քաղաքի կանանց հավասարեցնում է young persons-ին, յերեխաների աշխատանքն իջեցնում է 6½ ժամի և սահմանադրում է Relaissystem-ը: Բայց, դրա փոխարեն, այժմ թույլատրվում է յերեխաների աշխատանքն 8 քառեկամից: 1847-ին վերջապես անց է կացվում 10-ժամյա աշխատորի բիլլը կանանց և young persons-ի համար. p. 259 (252) [248]: Կապիտալիստների փորձերը դրա դեմ. p. 260—268 (232—239) [248—257]: 1847-ի ակտի մեջ մի flaw³ առիք դարձավ այն կոմպրոմիսային ակտի p. 269 [258], վորը young persons-ի և women⁴-ի աշխատորը սահմանում եր 5 որ 10½-ական ժամ և 1 որ 7½ ժամ=շաբաթական 60 ժամ և հատկապես առ. ժամի 6-ի և յերեկ. ժամի 6-ի միջև: Ուրեմն 1847-ի ակտը յերեխաների [աշխատանքի] համար ուժի մեջ է: Բացառություն է կազմում մետաքսի արդյունաբերությունը, տ. p. 270 (240) [259]: 1853-ին յերեխաների համար ևս աշխատաժամանակը սահմանափակվում է

¹ Դեռահասները:

² Հերթափոխությունների սխեմա:

³ Բառացի՝ ձեղք, այստեղ՝ վրելպում:

⁴ Կանանց:

առաջնության ժամի 6-ի և յերեկոյան ժամի 6-ի միջև.
p. 272 (242) [260]:

1845-ի Printworks Akt¹-ը գրեթե ամենևին չի սահմանափակում. յերեխաները և կանայք կարող են 16 ժամ աշխատել: Ճերմականոցները և ներկարանները յենթարկվեցին 1860-ի որենքին, ժանեկագործարանները՝ 1861-ի, կավագործարանները և ուրիշ շատ ճյուղեր՝ 1863-ի (գործարանային ակտով այդ նույն տարում բաց ողում գործող ճերմականոցների և հացթխարանների համար առանձին ակտեր հրատարակվեցին). p. 274 (242) [262]:

Որոշու արդյունաբերությունն ուրեմն առաջինն և առաջացնում աշխատաժամանակի սահմանափակման պահանջը, բայց հետո բանից դուրս է՝ գալիս, վոր նույն դերաշխատումը հետզհետե տիրապետել է մյուս բոլոր ճյուղերին. p. 277 (245) [264]:

Այնուհետև պատմությունը ցույց է տալիս, վոր, հատկապես կանոնաց և յերեխաների աշխատանքը մշտցնելուց հետո, ամեն «աղատ» բանվորը կապիտալիստի հանդեպ անզեն է ու անզոր, և վոր այստեղից սկիզբ է առնում դասակարգային պայքարը բանվորների և կապիտալիստների միջև. p. 278 (247) [265]:

Ֆրանսիայում միայն 1848 թվին տրվեց 12-ժամյա որենքը բոլոր բանվորների և աշխատանքի բոլոր ճյուղերի համար: (Տես, սակայն, p. 253 (227) [243] յերեխաների աշխատանքի մասին 1841 թվին հրատարակած ֆրանսական որենքին վերաբերող ծանոթությունը. այդ որենքը միայն 1853-ին, այն ել միայն Département du Nord²-ում, իրոք կենսագործվեց):

¹ Ակտ չթագործական գործարանների մասին:

² Հյուսիսային դեպարտամենտում:

Բեղիկայում աշխատանքի լիակատար «աղատություններ»: Ամերիկայում ութժամյա շարժումը. p. 279 (247) [265—267]:

Բանվորն ուրեմն արտադրության պրոցեսից դուրս է գալիս բոլորովին ուրիշ, քան մտել էր այնտեղ: Աշխատանքի պայմանագրությունը ազատ ազնեմի ակտ չէր. այն ժամանակը, վորի տևողության համար նա ազատ է իր աշխատուժը վաճառելու, այն է, վորի տևողության համար նա ստիպված է նույնը վաճառել, և բանվորների մասսայական դիմադրությունն է միայն, վոր նրանց համար նվաճում է այնպիսի պետական օրենք, վոր հենց նրանց արգելում է կապիտալի հետ կնքած ազատ պայմանագրության միջոցով իրենց ու իրենց սերունդը վաճառելով՝ մահվան ու ստրակացման մատնել: Մարդկային անկապտելի իրավունքների ճոխ ցանկի տեղը բռնում է գործարանային ակտի համառ Magna Charta¹-ն. p. 280, 281 (249, 250) [268]:

5. ՀԱՎԵԼԱՐԺԵՔԻ ՆՈՐՄԱՆ ՈՒ ՄԱՍՍԱՆ

Նորմայի հետ միասին նաև նրա մասունն է տրված: Յեթն մի աշխատուժի որական արժեքը 3 շիլ. է, իսկ հավելարժեքի նորման՝ 100%, ապա նրա որական մասսան հավասար է 3 շիլ. մի բանվորի համար:

I. Քանի վոր փոփոխում կապիտալը կապիտալիստի կողմից միաժամանակ բանեցվող բոլոր աշխատուժերի դրամական արտահայտությունն է, ապա նրանցով արտադրված հավելարժեքի մասունն = փոփոխուն կապիտալին $\times$ հավելարժեքի նորմայով:

Յերկու գործոններն ել կարող են փոխվել, և դրանից

¹ Հիմնական որենքներ: Բառացի՝ մեծ խառնուրդ:

առաջին դարձի 6-ի և յերեկոյան ժամի 6-ի միջև.
p. 272 (242) [260]:

1845-ի Printworks Akt¹-ը գրեթե ամենևին չի
սահմանափակում. յերեկոյանը և կանայք կարող են
16 ժամ աշխատել: Ճերմականոցները և ներկարան-
ները յենթակիցին 1860-ի որենքին, ժանեկագոր-
ծարանները՝ 1861-ի, կավագործարանները և ուրիշ
շատ ճյուղեր՝ 1863-ի (գործարանային ակտով այդ
նույն տարում բաց ողում գործող ճերմականոցների և
հացթխարանների համար առանձին ակտեր հրատա-
րակվեցին). p. 274 (242) [262]:

Մոռը արդյունաբերությունն ուրեմն առաջինն և
առաջացնում աշխատաժամանակի սահմանափակման
պահանջը, բայց հետո բանից դուրս ե՝ գալիս, վոր
նույն գերաշխատումը հետզհետե տիրապետել է մյուս
բոլոր ճյուղերին. p. 277 (245) [264]:

Այնուհետև պատմությունը ցույց է տալիս, վոր,
հատկապես կանանց և յերեկոյանը աշխատանքը մրտ-
ցնելուց հետո, ամեն «ազատ» բանվորը կապիտալիս-
տի հանդեպ անդեն է ու անդոր, և վոր այստեղից
սկիզբ է առնում դասակարգային պայքարը բանվոր-
ների և կապիտալիստների միջև. p. 278 (247) [265]:

Փրանսիայում միայն 1848 թվին տրվեց 12-ժամյա
որենքը բոլոր բանվորներին և աշխատանքի բոլոր ճյու-
ղերի համար: (Տես, սակայն, p. 253 (227) [243] յերե-
կաների աշխատանքի մասին 1841 թվին հրատարա-
կած ֆրանսական որենքին վերաբերող ծանոթու-
թյունը, այդ որենքը միայն 1853-ին, այն ել միայն
Département du Nord²-ում, իրոք կենսագործվեց):

¹ Ակտ չթաղրոշմական գործարանների մասին:

² Հյուսիսային դեպարտամենտում:

Բելգիայում աշխատանքի լիակատար «ազատությու-
նը»: Ամերիկայում ութժամյա շարժումը. p. 279 (247)
[265—267]:

Բանվորն ուրեմն արտադրության պրոցեսից դուրս
է դալիս բոլորովին ուրիշ, քան մտել էր այնտեղ:
Աշխատանքի պայմանադրությունը ազատ ազնեմի ակտ
չէր. այն ժամանակը, վորի տևողության համար նա
ազատ է իր աշխատութե վաճառելու, այն է, վորի
տևողության համար նա սխալված է նույնը վաճառել,
և բանվորների մասսայական դիմադրությունն է միայն,
վոր նրանց համար նվաճում է այնպիսի պնեմա
որենք, վոր հենց նրանց արգելում է կապիտալի հետ
կնքած ազատ պայմանադրության միջոցով իրենց ու
իրենց սերունդը վաճառելով՝ ժահվան ու ստրակացման
մատենը: Մարդկային անկապտելի իրավունքների ճոխ
ցանկի տեղը բռնում է գործարանային ակտի համաստ
Magna Charta¹-ն. p. 280, 281 (249, 250) [268]:

5. ՀԱՎԵԼԱՐԺԵՔԻ ՆՈՐՄԱՆ ՈՒ ՄԱՍՍԱՆ

Նորմայի հետ միասին նաև նրա մասունն է տրված:
Յեթե մի աշխատութի որական արժեքը 3 շիլ. է, իսկ
հավելարժեքի նորման՝ 100%, ապա նրա որական
մասսան հավասար է 3 շիլ. մի բանվորի համար:

I. Բանի վոր փոփոխում կապիտալը կապիտալիստի
կողմից միաժամանակ բանեցվող բոլոր աշխատութեների
դրամական արտահայտությունն է, ապա նրանցով
արտադրված հավելարժեքի մասունն = փոփոխուն կա-
պիտալին $\times$ հավելարժեքի նորմայով:

Յերկու գործոններն ել կարող են փոխվել, և դրանից

¹ Հիմնական որենքներ: Բառացի՝ մեծ խառնի:

տարբեր զուգակցություններ կարող են առաջանալ: Հավելյալ արժեքի մասսան կարող է փոխվել, անգամ նվազող փոփոխուն կապիտալի դեպքում, յեթե նորման բարձրանում է, հետևաբար աշխատողը յեկաբացվում է. p. 282 (251) [269]:

II. Հավելարժեքի նորմայի այս բարձրացումն իր բացառակի սահմաններն ունի նրա մեջ, վոր աշխատողը յերբեք չի կարող մինչև լրիվ 24 ժամ յերկարացվել, վոր մի բանվորի որական արտադրանքի ամբողջ արժեքն ուրեմն յերբեք չի կարող հավասար լինել 24 աշխատաժամի արժեքին:

Հավելարժեքի միևնույն մասսան ստանալու համար փոփոխուն կապիտալը կարող է ուրեմն փոխարինվել աշխատանքի ավելի բարձր շահագործումով այս սահմաններում միայն: Սա կարեոր է տարբեր յերևույթներ բացատրելու համար, վորոնք ծագում են կապիտալի հակասական տենդենցից—1) փոփոխուն կապիտալը և բանեցվող բանվորների թիվը կրճատելու և 2) այնուամենայնիվ հավելյալ արժեքի հնարավոր մեծադույն մասսան արտադրելու. p. 283, 284 (253, 254 [270, 271]):

III. Տարբեր կապիտալների արտադրած արժեքի և հավելարժեքի մասսաները, աշխատուժի տվյալ արժեքի և շահագործման միահավասար աստիճանի դեպքում, ուղիղ համեմատական են այս կապիտալների փոփոխուն բաղադրամասերի մեծություններին. p. 285 (255) [272]: Այս, ըստ յերևութին, դեմ է բոլոր իրողություններին:

Տվյալ հասարակության մեջ և տվյալ աշխատողի համար հավելարժեքը կարող է մեծացվել բանվորների թվի, այսինքն բնակչության մեծացմամբ միայն, իսկ

բանվորների տվյալ թվի համար՝ աշխատողի յերկարացմամբ միայն: Բայց այս միայն բացառակի հավելյալ արժեքի համար է՝ կարեոր:

Այժմ պարզվում է, վոր փողի վնչ ամեն դեմար կարող է կապիտալ դարձվել, վոր մի մինիմում գոյություն ունի՝ մի հասիկ աշխատուժի և անհրաժեշտ աշխատամիջոցների արտադրած արժեքը: Վորպեսզի իմեք կարողանար բանվորի պես ապրել, կապիտալիստը պետք է, հավելարժեքի նորման 100% լինելու դեպքում, արդեն 2 բանվոր ունենար և դեռ վնչինչ չեր խնայի: Նույնիսկ 8 բանվոր ունենալու դեպքում նա այնուամենայնիվ դեռ մանր վարպետ է: Այդ պատճառով միջնադարում մարդիկ բռնությամբ հետ ելին պահվում արհեստավոր-վարպետներից կապիտալիստներ դառնալուց, մի վարպետի պահելը վարպետացուների թվի սահմանափակումով: Մի իրական կապիտալիստ առաջ բերելու համար պահանջվող հարստության մինիմումը փոփոխվում է տարբեր ժամանակաշրջաններում և տնտեսության տարբեր ճյուղերում: p. 288 (256) [274—275]:

Կապիտալը զարգանալով դարձավ աշխատանքի հրամայող և հոգում է, վոր բանվորները կարգին ու լարուն աշխատեն: Այնուհետև նա հաղթարում է բանվորներին ավելի շատ աշխատանք կատարել, քան հարկավոր է նրանց ապրուստի համար, և հավելարժեք դուրս ծծելում գերազանցում է արտադրության բոլոր նախկին սիստեմներին, վորոնք հիմնված էին ուղղակի հարկադրական աշխատանքի վրա:

Կապիտալն աշխատանքն իրեն յենթարկեց տվյալ տեխնիկական պայմանների հետ միասին և սկզբում նրանք չի փոխում: Այս պատճառով, յեթե արտա-

գրության պրոցեսը զիտենք վորպիս աշխատանքի պրոցես, ապա բանվորն արտադրության միջոցներին չի վերաբերվում իբրև կապիտալի, այլ իբրև իր սեփական նպատակահարմար գործունեություն միջոցների: Բայց այլ է, յերբ զիտում ենք իբրև արժեմեծացման պրոցես: Արտադրության միջոցներն ուրիշի աշխատանքը ներծծելու միջոցներ են դառնում: Այլևս բանվորը չէ, վոր գործադրում է արտադրամիջոցները, այլ արտադրամիջոցներն են գործադրում բանվորին. 298 [276]: Փոխանակ նրանից սպառվելու, նրանք սպառում են նրան իբրև իրենց սեփական կենսական պրոցեսի ֆերմենտ, իսկ կապիտալի կենսական պրոցեսը միայն այն է, վոր նա շարժվում է իբրև ինֆեանուն արժեք... Փողի լոկ փոխարկվելը... արտադրամիջոցների՝ վերջիններիս դարձնում է իրավական տիրոջ, հարկադրական տիրոջ ուրիշի աշխատանքի և հավելաշխատանքի վրա:

ՀԱՐԱՐԵՐԱԿԱՆ ՀԱՎԵԼԱՐԺԵՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀԱՐԱՐԵՐԱԿԱՆ ՀԱՎԵԼԱՐԺԵՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Տվյալ աշխատորի դեպքում հավելաշխատանքը կաթող է մեծացվել միայն անհրաժեշտ աշխատանքի նվազեցումով, իսկ սրան կարելի չի հասնել, — յեթե աշխատավարձի իջեցումն արժեքից ավելի ցած՝ անուսինք, — աշխատանքի արժեքի իջեցումով միայն, ուրեմն անհրաժեշտ կենսամիջոցների գնի իջեցումով. p. 291—293 (261—263) [278—280]: Սրան ել կարելի չի միայն հասնել աշխատանքի արտադրողականության բարձրացումով, նեց արտադրողականի հեղափոխումով:

Աշխատորի յերկարացման միջոցով արտադրած հավելարժեքը բացառակ հավելարժեք է, անհրաժեշտ աշխատաժամանակի կարճացման միջոցով արտադրածը հարաբերական հավելարժեք է. p. 295 (264) [281]:

Աշխատանքի արժեքն իջեցնելու համար պետք է արտադրողական ուժի բարձրացումն արդյունաբերության այն ճյուղերն ընդգրկի, վորոնց արտադրանքները վորոշում են աշխատուժի արժեքը — սովորական կենսամիջոցներինը և նրանց փոխանյութերինն ու նրանց հումքինը և այլն: Յուրյ է տրվում, թե ինչպես մրցությունը արտադրողական ուժի բարձրացումը յերևան է բերում ցած ապրանքադների մեջ. p. 269—299 (264—267) [281—285]:

Ապրանքի արժեքը հակադարձ համեմատական է աշխատանքի արտադրողական ուժին, նույնպես էլ աշխատանքի արժեքը, վորովհետև սա ապրանքադրույթով է վորոշվում: Դրա հակառակ, հարաբերական հավելարժեքն ուղիղ համեմատական է աշխատանքի արտադրողական ուժին. p. 299 (267) [285]:

Կապիտալիստին հետաքրքրում է վնջ թե ապրանքի բացարձակ արժեքը, այլ նրա մեջ թաքնված հավելարժեքը: Հավելարժեքի իրացումը պարունակում է կանխավճարված արժեքի փոխհատուցումը: Յեւ վորովհետև ըստ 299-ի (267) [285] արտադրողական ուժի բարձրացման նույն պրոցեսն ապրանքի գինն իջեցնում է և նրա մեջ պարունակված հավելարժեքը մեծացնում, ապա սրանով բացատրվում է, թե ինչու կապիտալիստը, վորին հետաքրքրում է փոխանակարժեքի արտադրությունը միայն, շարունակ ձգտում է ապրանքի փոխանակարժեքն իջեցնել: Հմտ. Բենն. p. 300 (268) [286]:

Այս պատճառով աշխատանքի տնտեսումը արտադրողական ուժի զարգացման միջոցով՝ կապիտալիստական արտադրության մեջ բնավ նպատակ չի դնում աշխատորի կարճացումը: Վերջինս նույնիսկ կարող է յեկարգվի: Այս պատճառով այն տիպի տնտեսագետների մոտ, ինչպիսիներն են մի Մաք-Կուլիլիս, Յուր, Սենյոր և tutti quanti¹, մի եղում կարելի չե կարգաւ վոր բանվորը յերախապարս է կապիտալիստ տնտեսողական ուժերի գարգացման համար, իսկ հաջորդ եղում՝ վոր նա իր յերախապարսւթյունը պիտի և ապացուցի 10 ժամի փոխարեն 15 ժամ աշխատելով:

¹ Բոլոր նմանները:

Արտադրողական ուժերի այս դարգացումը միայն նպատակ ունի կարճացնելու անհրաժեշտ աշխատանքը և յերկարացնելու աշխատանքը կապիտալիստի համար. p. 301 (269) [287]:

2. ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Ինչպես տեսանք՝ p. 288 (256) [273], կապիտալիստական արտադրության համար հարկավոր է մի անհատական կապիտալ, վորը բավականաչափ մեծ է, վորպեսզի կարողանա մեծ թվով բանվորներ միաժամանակ աշխատեցնել. միայն այնտեղ, վորտեղ աշխատողորձառուն ինքը բոլորովին ազատվում է աշխատանքից, նա լիովին դառնում է կապիտալիստ: Մեծ թվով բանվորների միաժամանակ գործելը միեւնույն աշխատադաշտում, միեւնույն կապիտալիստի հրամանադրության տակ, միեւնույն ապրանքատեսակի արտադրության համար՝ պատկանում են յեւ սրտաբանորեն (begrifflich) կազմում է կոպիտալիստական տնտեսություն յեւակեթ. p. 302 (269) [287]:

Սկզբում ուրեմն միայն բանակալան տարբերություն կա նախկինի համեմատությամբ, յերբ ավելի փոքր թվով բանվորներ էլին աշխատեցվում մի աշխատատղի կողմից: Բայց շուտով ձևափոխվում է: Արդեն բանվորների շատությունը յերաշխիք է, վոր աշխատատուն իրապես միջին աշխատանք է ստանում, մի բան, վորը տեղի չունի մանր վարպետի մոտ, վորն այնուամենայնիվ պետք է վճարի աշխատանքի միջին արժեքը: Մանր արտադրության մեջ անհավասարությունները համակշռվում են հասարակության, բայց վոչ առանձին վարպետի համար: Ուրեմն արժեքի ձևացման որեւմէն ընդհանրապես միայն այն ժամանակ է առան-

ձին արտադրողի համար լիովին իրագործվում, յերբ նա իբրև կապիտալիս և արտադրում, միաժամանակ շատ բանվորներ և շարժման մեջ դնում, ուրեմն սկզբից յեւ յեր արդեն հաստատկան միջին աշխատանքի և արժանիքի դնում. p. 303—304 (270—272) [289]:

Բայց այնուհետև՝ արտադրութեան միջոցների տնտեսումը միմիայն խոշոր արտադրութեան շնորհիւ, կապիտալի հաստատուն մասերի արժեքի ավելի փոքր մասի փոխանցումն արտադրանքին, վորը միայն առաջ և գալիս արտադրամիջոցների միահամուռ սպառումից շատերի աշխատանքային պրոցեսում:

Այսպիսով աշխատամիջոցները հասարակական բնույթ են ձեռք բերում ավելի վաղ, քան հենց աշխատանքային պրոցեսն և ձեռք բերում այն (մինչև այստեղ յենթադրվում և միատեսակ պրոցեսների սոսկ առնթովերութուն). p. 305 (272) [290]:

Այստեղ արտադրամիջոցների տնտեսումը միայն այն չափով պետք է քննել, վոր չափով նա ապրանքներն եժանացնում և և դրա շնորհիւ աշխատանքի արժեքն իջեցնում: Վորչափով նա փոփոխում և հավելյալ արժեքի հարաբերութունը կանխավճարված ամբողջ կապիտալին՝ (c+v), այդ պետք է դիտարկվի III գրքում միայն: Այս տրոհումը միանգամայն համապատասխանում և կապիտալիստական արտադրութեան վորդուն. քանի վոր նրա մեջ են աշխատանքի պայմաններն ինքնուրույն կերպով հանդիման գալիս բանվորներին, ապա աշխատամիջոցների տնտեսումն էլ յերևան և գալիս իբրև մի առանձին գործառնութուն, վորը բանվորին չի վերաբերում, ուստի և անջատված և այն մեթոդներից, վորոնց միջոցով կապիտալի սպառած աշխատութի արտադրողականութունը բարձրացվում է:

Արտադրութեան միեւնույն պրոցեսում կամ արտադրութեան միմիայն հետ կապ ունեցող պրոցեսներում կողք-կողքի և իրար հետ պլանաչափորեն աշխատող շատ անձերի աշխատանքի ձեռք կոչվում և կոոպերացիա. p. 306 (273) [291]: (Concours de forces. Destutt de Tracy¹):

Առանձին բանվորների ուժերի մեխանիկական գումարն էյապես տարբեր և մեխանիկական պոտենցիալ ուժից, վորն առաջ և գալիս, յերբ շատ ձեռքեր միաժամանակ միասին գործում են միեւնույն անբաժան գործառնութեան մեջ (լծակ ու բեռ և այլն): Կոոպերացիան ստեղծում և սկզբից և յեթ մի արտադրողական ուժ, վորն ինքնըստինքյան մասնաշաղկապում ուժ և:

Այնուհետև, արտադրողական աշխատանքների մեծամասնութեան մեջ սոսկ հաստատկան համաշաղկապում առաջ և բերում մի մրցակցութուն, վորն առանձին բանվորների անհատական արտադրողականութունը բարձրացնում է, այնպես վոր 12 բանվորը 144-ժամյա մի հավաքական աշխատորում ավելի մեծ արտադրանք են տալիս, քան 12 բանվորը 12 անջատ աշխատորերում կամ մի բանվորը 12 հաջորդական աշխատորերում. p. 307 (273) [292]:

Թեև շատերը միեւնույն աշխատանքն են կատարում կամ միատեսակ աշխատանք, բայց և այնպես յուրաքանչյուրի անհատական աշխատանքը կարող է աշխատանքային պրոցեսի մի տարբեր փուլը ներկայացնել (մարդկանց շղթան, վորոնք վորեւ բան մեկը մյուսին են տալիս), ընդվորում կոոպերացիան դարձյալ աշխատանք և խնայում: Նույնպես էլ, յերբ մի շնք

¹ Ուժերի միացում. Դեստյուտ դը Տրասի:

Ֆունկցիաների կապը գտնվում է նրանցից դուրս, կապիտալի մեջ, այնպես լոր նրանց սեփական միությունն ընդհանուր կանգնում է իբրև կապիտալիստի հեղինակություն, իբրև ոտարի կամք: Այսպիսով կապիտալիստական ղեկավարումը յեղհարկված է (1. հասարակական աշխատանքային պրոցես մի արտադրանքի պատրաստման համար, 2. մի կապիտալի արժեմեծացման պրոցես) և ըստ իր ձևի բռնակալական է: Այս բռնակալությունն այժմ զարգացնում է իր ինքնահատուկ ձևերը—կապիտալիստը, վորն ինքը հենց նոր է աշխատանքից ազատվել, ստորին հսկողությունը ղեկավարում է սպաների ու յենթասպաների մի կազմակերպված հրոսակմբի, վորոնք իրենք կապիտալի վարձու բանվորներ են: Տնտեսագետները հսկողություն այս ծախքերը ստրկության ժամանակի համար մոցնում են faux frais¹-ի մեջ, իսկ կապիտալիստական արտադրություն համար ղեկավարումը, վորչափով նա շահագործումով է պայմանավորված, նրանք ուղղակի նույնացնում են միևնույն ֆունկցիայի հետ, վորչափով նա հասարակական աշխատանքային պրոցեսից է բղխում. p. 313, 314 (279) [297—298]:

Բարձրագույն հրամանատարությունը արդյունաբերություն մեջ դառնում է կապիտալի ատրիբուտը, ինչպես վոր ֆեոդալական ժամանակաշրջանում բարձրագույն հրամանատարությունը պատերազմում ու դատարանում հողատիրության ատրիբուտն էր. p. 314 (279) [298]:

Կապիտալիստը դնում է 100 դատ-դատ աշխատուժեր է այդպիսով ստանում է 100-ի համակցված աշ-

խատուժը: Այդ 100-ի համակցված աշխատանքը նա չի վճարում: Համակցված աշխատանքի պրոցեսի մեջ մտնելիս բանվորներն արդեն դադարել են իրենք իրենց պատկանելուց: Նրանք կապիտալի մասն են դարձել: Այսպիսով աշխատանքի հասարակական տարադրական ուժը յերևան է գալիս իբրև կապիտալի իմանենն արտադրական ուժը: p. 315 (280) [299]:

Կոոպերացիայի որինակներ հին յեզիպոսյաների մոտ. p. 316 (281) [299]:

Կուլտուրայի սկզբնական շրջաններում նախնադարյան կոոպերացիան վորսորդական ժողովուրդների, վաշկատունների կամ հնդկական համայնքի մեջ հիմնվում է 1) արտադրության պայմանների համայնական սեփականություն վրա, 2) առանձին անհատի բնածուն սերտ կապի վրա տոհմի ու նախնադարյան համայնքի հետ:

Սպորադիկ կոոպերացիան հնադարում, միջնադարում և արդի դարում ծնվում է հիմնվում է ուղղակի տիրապետություն և բռնություն վրա, մեծ մասամբ ստորկություն վրա: Կապիտալիստական կոոպերացիան, ընդհանրառակը, յենթադրում է ազատ վարձու բանվոր: Պատմականորեն նա յերևան է գալիս ուղղակի հակադրվելով գյուղացիական տնտեսությունը և անկախ արհեստին (լինի համքարական, թե վոչ) և այն էլ իբրև կապիտալիստական արտադրության պրոցեսին առանձնահատուկ և նրան տարբերող պատմական ձև: Նա առաջին փոփոխությունն է, վոր կրում է աշխատանքային պրոցեսը կապիտալին ստորադասվելով: Այսպիսով այստեղ անմիջապես հանդես է գալիս 1) կապիտալիստական արտադրայեղանակն իբրև պատմական անհրաժեշտություն աշխատանքային պրոցեսը հասարակական պրոցեսի փոխարկելու համար, 2) աշխա-

¹ Բառացի՝ կեղծ ծախքեր, փոխաբերական իմաստով՝ անարտադրողական, բայց անհրաժեշտ ծախքեր:

տանքային պրոցեսի այս հասարակական ձևը իբրև կապիտալի մի մեթոդ, աշխատանքն ավելի շահավետորեն շահագործելու՝ նրա արտադրողական ուժերի բարձրացման միջոցով. p. 317 (282) [301]:

Կոոպերացիան, վորչափով մինչև հիմա քննության առնվեց, իր պարզ ձևի մեջ, համընկնում է ավելի խոստանքի բաժանումը կամ մեքենանին մի նշանավոր դեր չեն խաղում. այսպիսով, թեպետև կոոպերացիան վողջ կապիտալիստական արտադրայելանալի հիմնական է, սակայն նրա պարզ ձևն ինքը հանդիսանում է իրարից և տարբեր բանավորների կողմից միաժամանակ կատարվում (ասեղներ և այլն): Մի արհեստավորի գործ լինելու փոխարեն՝ արտադրանքն այժմ արհեստավորների մի միության գործ է, վորոնցից յուրաքանչյուրը միայն մի մասնական գործառնություն է կատարում. p. 318 (282) [301]:

3. ԱՇԽԱՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄ ՅԵՎ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱ

Մանուֆակտուրան, աշխատանքի բաժանման վրա հենվող կոոպերացիայի դասական ձևը, գերիշխում է մոտավորապես 1550-ից մինչև 1770 թիվը:

Նա առաջ է գալիս՝

1) Կամ տարբեր արհեստների միավորման միջոցով, վորոնցից յուրաքանչյուրը մի մասնական գործառնություն է կատարում (որինակ՝ կապերի արտադրությունը), վորի ժամանակ համապատասխան անհատ արհեստավորը շատ շուտով կորցնում է ընդունակությունը իր ամբողջ արհեստով զբաղվելու, բայց դրա փոխարեն նրա մասնարհեստն ավելի յե կատարելագործվում ուրեմն, վորի ժամանակ պրոցեսը փոխաբեր-

վում է ամբողջական գործառնության բաժանման իր առանձին մասերին. p. 318, 319, (283, 284) [301, 302]:

2) Կամ շատ արհեստավորներ, վորոնք նույնն են առում, կամ նման բան, միացվում են միևնույն գործարանում, և հետզհետե առանձին գործառնությունները, փոխանակ մի բանվորի կողմից հաջորդաբար կատարվելու, անջատվում են իրարից և տարբեր բանավորների կողմից միաժամանակ կատարվում (ասեղներ և այլն): Մի արհեստավորի գործ լինելու փոխարեն՝ արտադրանքն այժմ արհեստավորների մի միության գործ է, վորոնցից յուրաքանչյուրը միայն մի մասնական գործառնություն է կատարում. p. 319, 320 (284, 285) [303]:

Յերկու դեպքում էլ նրա հետևանքը մի տարաբանություն է, վորի որդանները մարդիկ են: Կատարումը մնում է տահեստային. ամեն մի մասնապրոցես, վորով արտադրանքն անցնում է, պետք է ձեռնաշխատանքով կատարելի լինի, հետևաբար, տարաբանությամբ պրոցեսի վորև իրապես գիտական վերլուծությամբ մասին խոսք լինել չի կարող: Հենց արհեստային բնույթի լուծում է, վոր ամեն մի առանձին բանվորն այնքան լիովին շղթայված է մի մասնաֆունկցիայի. p. 321 (285) [304]:

Այսպիսով աշխատանք է խնայվում արհեստավորի համեմատությամբ, և այս էլ ավելի յե ուժեղացվում փոխանցելով հաջորդ սերունդներին: Աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը սրանով համապատասխանում է նախկին հասարակությունների տենդենցության՝ արհեստները ժառանգական դարձնելու. կատայական համաքարություններ. p. 322 (268) [305]:

Գործիքների ստորաբաժանումը տարբեր մասնաշխատանքներին հարմարեցնելու միջոցով — մուրճերի 500 տեսակներ Ռիմինգհամում. p. 323 — 324 (288) [307]:

Մանուֆակտուրայի ամբողջական մեխանիզմի տեսակետից դիտելով՝ նա յերկու կողմ ունի — կամ ինքնուրույն մասնաբաժանողների սոսկ մեխանիկական բաղադրություն է (ժամացույցը) կամ իրար հետ կապակցված պրոցեսների շարք մի արհեստանոցում (ասեղը):

Մանուֆակտուրայում բանվորների յուրաքանչյուր խումբը մյուսին տալիս է նրա հումքը: Ուստի հիմնական պայմանն այն է, վոր ամեն մի խումբ սկսելով ժամանակում մի սկսել ֆունկցիոնալ, հետևաբար աշխատանքի մի բոլորովին ուրիշ անընդհատություն, կանոնավորություն, միորինակություն և լարվածություն է առաջ գալիս, քան բուն իսկ կոոպերացիայի մեջ: Այստեղ, հետևաբար, առկա արտադրության սեկցիաների օրենքներ և դառնում, վոր աշխատանքը պետք է հաստատված լինի և անհատական աշխատանքի լինի. p. 329 (292) [311]:

Առանձին գործառնությունների համար պահանջվող ժամանակի անհավասարությունը պայմանավորում է, վոր բանվորների տարբեր խմբերը տարբեր զորություն ունենան և տարբեր թվով լինեն (տառազորություն ունենան և տարբեր թվով լինեն (տառազորություն ունենան և տարբեր թվով լինեն) 4 ձուլորդ և 2 ծայրատու): Մանուֆակտուրան ուրեմն ստեղծում է մի մասթեմատիկորեն հաստատուն հարաբերություն հավաքական բանվորի առանձին որդանների քանակական չափի համար, և արտադրությունը կարող է ընդարձակվել միայն գործի դեմքով հավաքական խմբի մի նոր բաղ-

մադատիլը: Դրան պետք է ավելացնել, վոր վորոշ ֆունկցիաների ինքնուրույնացումը — հսկողությունը, արտադրանքի փոխադրումը տեղից տեղ և այլն — միայն այն ժամանակ է շահավետ դառնում, յերբ արտադրությունը վորոշ բարձրություն է հասած. p. 329, 330 (292, 293) [311, 312]:

Պատահում է նաև տարբեր մանուֆակտուրաների համակցում մի հավաքական մանուֆակտուրայի, սակայն միշտ ել դեռ պակասում է իրապես տեխնոլոգիական միասնությունը, վորը միայն մեքենայի հետ է առաջ գալիս. p. 331 (294) [313, 314]:

Մանուֆակտուրայի մեջ դեռ վաղ ժամանակներում տեղ-տեղ յերևան են գալիս մեքենաներ՝ հատկապես, հանածոների աղորիք և այլն, բայց միայն իբրև յերկրորդական բան: Մանուֆակտուրայի գլխավոր մեքենան համակցված հավաքական բանվորն է, վորը շատ ավելի բարձր կատարելություն տեր է, քան հին անհատ արհեստային բանվորը, և վորի մեջ բոլոր անկատարությունները, վորոնք մասնագործ բանվորի մեջ հաճախ անհրաժեշտաբար զարգանում են, իբրև կատարելություն են յերևան գալիս. p. 333 (295) [315]:

Մանուֆակտուրան զարգացնում է այդ մասնաշխատանքների՝ skilled և unskilled¹, տարբերությունները և մինչև անգամ բանվորների մի լիակատար ստաիճանակարգություն. p. 334 (296) [315—316]:

Աշխատանքի բաժանումը՝ 1) ընդհանրական (յերկրագործություն, արդյունաբերություն, նավագնացություն և այլն), 2) մասնական (տեսակների և յենթատեսակների), 3) միական (արհեստանոցի ներսը):

¹ Վերակալ և վոչ վերակալ

Աշխատանքի հասարակական բաժանումը նույնպես տարբեր յեղակատելից է զարգանում. 1) ընտանիքի և տոհմի ներսը բնաճուն բաժանումն ըստ սեռի և ըստ հասակի, վորն ընդլայնվում է հարեաններին բռնի ստրկացումով. ք. 335 (296) [317]: 2) Տարբեր համայնքներ դիրքի, կլիմայի, կուլտուրական մակարդակի համեմատ տարբեր արտադրանքներ են տալիս, և վերջինմատ տարբեր արտադրանքներ են տալիս, և վերջիններս փոխանակման են յեմքադիվում այնքող, վորքող այս համայնքները համաձայնում են մեջ են մեկում. ք. 49 (50) [56]: Փոխանակությունն ոտար համայնքներին հետ այդ դեպքում գլխավոր միջոցներից մեկն է սեփական համայնքի բնաճուն կապը քակտելով՝ աշխատանքի բնաճուն բաժանման հետագա զարգացման շնորհիվ. ք. 336 (299) [318]:

Աշխատանքի մանուֆակտուրային բաժանումն ուրեմն մի կողմից յենթադրում է աշխատանքի հասարակական բաժանման համար զարգացման մի վորոշ աստիճան, մյուս կողմից շարունակում է զարգացնել այն—սա աշխատանքի տերիտորիալ բաժանումն է. ք. 337, 338 (300) [320]:

Սակայն աշխատանքի հասարակական և մանուֆակտուրային բաժանման միջև միշտ էլ այն տարբերությունը կա, վոր առաջինն անհրաժեշտորեն չափանք է արտադրում, մինչդեռ յերկրորդի մեջ մասնագործ բանվորն ապրանք չի արտադրում: Այս պատճառով վերջինի մեջ կոնկրետ կազմակերպություն կա, մինչդեռ առաջինի մեջ մասնատվածություն և մրցության անկարգավորություն. ք. 339, 341 (301, 303) [321, 322]:

Հնդկական համայնքների վաղադույն կազմակերպությունների մասին. ք. 341, 342 (304) [323, 324]: Համբարություն՝ ք. 343, 344 (305) [325]: Մինչդեռ բո-

լորի մոտ էլ գոյություն ունի աշխատանքի այս բաժանումը հասարակություն մեջ, աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը կապիսալիստական արտադրայեղանակի մասնաճյուղն է սեղծագործությունն է:

Ինչպես վոր կոոպերացիայի մեջ, այնպես էլ մանուֆակտուրայի մեջ՝ գործող աշխատամարմինը կապիսալի մի գոյան է: Աշխատանքների համակցությունից ծագող արտադրողական ուժն այդ պատճառով ներկայանում է իբրև կապիսալի արտադրողական ուժ: Բայց մինչդեռ կոոպերացիան անհատ բանվորի աշխատայեղանակն ընդհանուր առմամբ անփոփոխ է թողնում, մանուֆակտուրան հեղափոխում է այն, նա հաշմեցնում է բանվորին. անընդունակ լինելով ինքնուրույն արտադրանք տալու՝ նա այլևս կապիտալիստի արհեստանոցի սոսկ պատկանելությունն է: Աշխատանքի հոգևոր կարողություններն անհետանում են շատերի կողմում, վորպեսզի մեկի կողմում իրենց մասշտաբն ընդարձակեն: Աշխատանքի մանուֆակտուրային բաժանման արդյունքն է, վոր աշխատանքային պրոցեսի հոգևոր կարողությունները բանվորներին հանդիպադրվում են իբրև ոտարի սեփականություն յեղ մեկում վրա իջնող ուժ: Անշտաման այս պրոցեսը, վոր արդեն մեջ զարգանում, ավարտվում է խոշոր արդյունաբերություն մեջ, վորը գիտությունն իբրև ինքնուրույն արտադրողական կարողություն անջատում է աշխատանքից և հարկադրում ծառայել կապիտալին. ք. 346 (308) [326—328]:

Մեջբերումներ ք. 347 (308) [328]:

Մանուֆակտուրան մի կողմից հասարակական աշխատանքի մի վորոշ կազմակերպություն լինելով, մյուս

կողմից հաղթածության հավելումների արժեքները լին մի առանձին մեքող ե. ք. 350 (311) [331]: Պատմական նշանակությունը հենց նույն տեղում:

Մանուֆակտուրայի զարգացման խոչընդոտները նույնիսկ նրա դասական շրջանում—անվարժ բանվորների թվի սահմանափակվածությունը շնորհիվ վարժուհիների գերակշռության: Հաճախ տղամարդկանց ընդդիմադրությունը յերեսներին ու կանանց աշխատանքին, laws of apprenticeship-ի¹ վրա հենվելը մինչև վերջին ժամանակները, նույնիսկ այնտեղ, վորտեղ ավելորդ շարունակական աշխատանքի անկարգապահություն կա, վորովհետև հավաքական բանվորը դեռևս բանվորներից անկախ կմախք չուներ: Բանվորների արտագաղթը. ք. 353, 354 (314) [334, 335]:

Բացի դրանից մանուֆակտուրան ինքն ի վիճակի չէր. ամբողջ հասարակական արտադրությունը հեղաշրջելու կամ գոնե միայն տիրապետելու: Նրա տեխնիկական նեղ խարխուլը հակասություն մեջ մտավ նրա իսկ ստեղծած արտադրական պահանջների հետ. զգացվում է մեքենայի կարիքը, և մանուֆակտուրան ել արդեն սովորել էր այն պատրաստել. ք. 355 (315) [335]:

4. ՄԵԲԵՆԱՆԻՆ ՅԵՎ ԽՈՇՈՐ ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ա. ՄԵԲԵՆԱՆԻՆ ԻՃՏՈՒՆ

Մինչդեռ մանուֆակտուրայի մեջ արտադրայեղանակի հեղաշրջումն աշխատուժից եր յեղում, այստեղ նա աշխատամիջոցներից է յեղում:

¹ Աշկերտության որենքներ:

Ամեն զարգացած մեքենանի բաղկացած է 1) շարժիչ մեքենայից, 2) շարժահաղորդ մեխանիզմից, 3) գործիք-մեքենայից. ք. 357 (317) [336—337]:

18-րդ դարի արդյունաբերական հեղափոխությունն սկիզբ է առնում գործիք-մեքենայից: Սրա բնորոշ կողմնայն է, վոր գործիքը ավելի կամ պակաս փոփոխված կերպարանքներով մարդուց անցնում է մեքենային, վորը, իր ֆունկցիան կատարելով, գործիքը շարժման մեջ է դնում: Իսկ շարժիչ ուժը մարդկային ուժն է արդյոք, թե մի բնական ուժ, այդ առաջիմ միևնույնն է: Մասնահատուկ տարբերությունն այն է, վոր մարդը միայն իր սեփական օրգանները կառող է բանեցնել, իսկ մեքենան վորոք սահմաններում կառող է այնքան գործիքներ բանեցնել, վորքան պահանջվում է (մասնանիվը 1 իլիկ, Jenny¹-ն 12—18 իլիկ):

Վորչափով մասնանիվի մեջ վոչ թե վորտեղ, ուժն է հեղափոխություն յենթարկվում, այլ իլիկը, սկզբում ամենուրեք դեռևս մարդը միաժամանակ է՝ շարժիչ ուժն է, և՛ հսկողը: Գործիք-մեքենաների հեղափոխությունն, ընդհանրապես, նախ պահանջ դարձրեց շոգեմեքենայի վերջնավարտումը և առաջ նաև իրագործեց այն. ք. 359—360 (319) [338—340]: Այնուհետև՝ ք. 361—362 (320—321) [340—343]:

Ֆերիլու տեսակ մեքենանի կա խոշոր արդյունաբերության մեջ. կամ 1) միատեսակ մեքենաների կոոպերացիա (power-loom², envelope machine³, վորը մի ամբողջ շարք մասնագործ բանվորների աշխատանքը կատարում է տարբեր գործիքների համակցման

¹ Մանամեքենա:

² Մանագործական շոգեհաստոց:

³ Մարամեքենա:

միջոցով), այստեղ ունենք արդեն մեխանիկական շարժիչ ուժի տեխնոլոգիական ազդեցութիւնը, կամ 2) մեքենաների սիստեմ, դանաղան մասնաշխատանքային մեքենաների համակցութիւն (մանագործութիւն): Վերջինս իր բնաճուն հիմքն է գտնում մանուֆակտուրայի աշխատաբաժանման մեջ: Բայց անմիջապէս մի ելակն տարբերութիւն: Մանուֆակտուրայում ամեն մի մասնապրոցեւր պետք է հարմարեցված լիներ բանվորին, այստեղ այլևս դրա կարիքը չկա. աշխատանքի պրոցեսը կարող է ռքեկսիվութեմ վերլուծվել իր բազադրամասերին, վորոնց տիրապետումը մեքենաների միջոցով արդեն մնում է գիտութեանը կամ նրա վրա հիմնված փորձառութեանը: Այստեղ առանձին բանվորախմբերի քանակական հարաբերութիւնը կրկնվում է իբրեւ առանձին մեքենախմբերի հարաբերութիւն. p. 363—366 (322—325) [343—345]:

Յերկու դեպքում էլ գործարանը մի մեծ ավսումնասէ կադմում (վորն ի միջի այլոց միայն վերջերս է այդ ուղղութեամբ կատարելագործվել) և այդ նրա ազեկվատ կերպարանքն է. p. 367 (325) [346]: Նրա ավարտուն կերպարանքը մեքենայաւորաց ավսումնասէ է, վորը խոշոր արդյունաբերութեան արհեստային և մանուֆակտուրային պատվանդանը վերացրեց և այդպիսով առաջին անգամ մեքենանու ավարտուն կերպարանքը տվեց. p. 369, 372 (327, 329) [349, 351]:

Առանձին ճյուղերի, ներառյալ նաև հազորդակցութեան միջոցների, հեղաշրջումների կապը. p. 371 (328) [348]:

Մանուֆակտուրայի մեջ բանվորների համակցումը սուբյեկտիվ է, իսկ այստեղ մի ռքեկտիվ մեխանիկական արտադրական ռգանիդ կա, վոր բանվորը պատ-

րաստի գտնում է, և վորը կարող է գործել միայն հավաքական աշխատանքի միջոցով. աշխատանքի պրոցեսի կոոպերատիվ բնույթն այժմ սելսնիկական անհրաժեշտութիւն է. p. 372 (330) [351]:

Կոոպերացիայից և աշխատանքի բաժանումից ծագող արտադրողական ուժերը կապիտալին ծախք չեն նստում. բնութեան ուժերը, շոգին, ջուրը նույնպէս: Նմանապէս նաև գիտութեան միջոցով հայտնագործած ուժերը: Բայց սրանք կարող են միայն իրացվել մի համապատասխան ապարատի միջոցով, վորը պատրաստված է խոշոր ծախքերով. նմանապէս էլ գործիք-մեքենաներն անհամեմատ ավելի արժեն, քան նախկին գործիքները: Այս մեքենաները, սակայն, շատ ավելի յերկարատե կյանք և շատ ավելի մեծ արտադրադաշտ ունեն, քան գործիքը, և այդ պատճառով համեմատաբար շատ ավելի չնչին արժեմասն են տալիս արտադրանքին, քան գործիքը. այդ պատճառով էլ այն ձրի ծառայութիւնը, վոր մեքենան կատարում է (և վորն արտադրանքի արժեքի մեջ նորից յերկան չի գալիս) շատ ավելի մեծ է, քան գործիքի դեպքում. p. 374, 375—376 (330, 332—333) [351, 352—353]:

Եժանացումն արտադրութեան համակենտրոնացման միջոցով խոշոր արդյունաբերութեան մեջ անհամեմատ ավելի մեծ է, քան մանուֆակտուրայում. p. 375 (332) [353]:

Պատրաստի ապրանքների գներն ապացուցում են, թէ մեքենան վորքան ավելի եժանացրել է արտադրութիւնը, և վոր աշխատամիջոցից փոխանցված արժեմասը հարաբերաբար աճում է, բայց բացարձակորեն նվազում: Մեքենայի արտադրողականութիւնն այն աստիճանով է չափվում, վորով նա փոխադրում է մարդ-

կային աշխատութիւն: Որինակ. ք. 377—379 (334—336) [355—357]:

Դիցուք մի շոգեգուծան փոխարինում է 150 բան-
վորի, վորոնց տարեվարձն է 3000 ֆ. ստերլինգ. այդ
դեպքում այս տարեվարձը ներկայացնում է վոյ քե
նրանց կատարած ամբողջ աշխատանք, այլ միայն ան-
հրաժեշտ աշխատանքը. բայց, դրանից դատ, նրանք
հավելաշխատանքն էլ են կատարում: Յեթե, ընդհակա-
ռակը, շոգեգուծանն արժե 3000 ֆ. ստ., ապա սա նրա
մեջ պարունակված ամբողջ աշխատանքի դրամական
արտահայտութիւնն է, և յեթե, ուրեմն, մեքենան
նույնքան արժե, վորքան և նրանով փոխարինված աշ-
խատուժը, ապա նրա մեջ ներկայացված մարդկային
աշխատանքը միշտ էլ ռաւ ավելի փոքր է, քան նրա-
նով փոխարինվածը. ք. 380 (336) [357]:

Իբրև արտադրութեան եժանցումն միշտ մեքենան
պէտք է ավելի քիչ աշխատանք արժենա, քան նա փոխա-
րինում է: Իսկ կապիտալի համար նրա արժեքը պետք է
ավելի փոքր լինի, քան նրանով փոխարինված աշխա-
տութիւնը: Այս պատճառով Ամերիկայում կարող են ի-
րենց այնպիսի մեքենաներ արդարացնել, վորոնք ննդ-
րեանց այնպիսի մեքենաներ արդարացնում (որինակ՝ քարա-
շարդ մեքենաները): Այս պատճառով վորոշ սահմանա-
փակումների հետեանքով հանկարծ կարող են այնպի-
սի մեքենաներ հանդես գալ, վորոնք առաջ կապիտալի
համար շահավետ չեյին. ք. 380—381 (337—338)
[357—359]:

• Ե. Աշխատութի յուրացումը մեքենանու կողմից

Քանի վոր մեքենանին ինքը պարունակում է այն
ուժը, վոր նրան շարժման մեջ է դնում, մկանային

ուժի արժեքն ընկնում է: Կանանց և յերեխաների աշխա-
տանք, վաճառ բանվորների քվի անհապաղ մեծացում
ընտանիքի այն անդամների ներգրավումով, վորոնք
մինչ այդ վարձու աշխատանք չեյին կատարում: Այս-
պիսով տրամադրու աշխատանքի արժեքը բաժնավում է ամ-
բողջ ընտանիքի աշխատութի վրա, հետեալաբար արժեզրեկ-
վում է:

Վորպեսզի մի ընտանիք ապրի, այժմ չորսը պետք
է կապիտալին մատակարարեն վոյ միայն աշխատանք,
այլ նաև հավելաշխատանք, մինչդեռ առաջ միայն մեկն
էր մատակարարում: Այսպիսով շահագործման մասե-
րիալի հետ միասին իսկույն ընդարձակվում է նաև
շահագործման ասիւնանք. ք. 383 (339) [360—361]:

Առաջ աշխատութեան վաճառքն ու առքն ազատ ան-
ձերի հարաբերութիւնն էր, հիմա գնվում են անշարժա-
նանքն ու կիսաշարժաձանքն, բանվորն այժմ վաճա-
ռում է կնոջն ու յերեխային, դառնում է սեփականու:
Որինակներ. ք. 384—385 (340—341) [361—362]:

Ֆիզիկական հաշմեցում: Բանվորների յերեխաների
մահացութիւնը ք. 386 (342) [364] յերկրագործութեան
արդյունաբերական վարման դեպքում ևս (Gang sys-
tem¹) ք. 387 (343) [364]:

Բարոյական հաշմեցում. ք. 388 (344) [365]: Դաստիա-
րակութեան վերաբերյալ հողվածները և գործարա-
նատերերի դիմադրութիւնը. ք. 390 (344) [365]: Կա-
նանց և յերեխաների մուտքը գործարան, վերջապես,
կոտորում է տրամադր-բանվորի դիմադրութիւնը կապի-
տալի բռնակալութեան. ք. 391 (346) [368]:

Յեթե մեքենան մի առարկայի արտադրման համար
անհրաժեշտ աշխատատեմանակը կտրեցնում է, ապա

¹ Խմբակների սխառն:

նա կապիտալի ձեռքին ուժեղ միջոց է դառնում աշխատողը նորմալ սահմանից օտս ավելի յերկարացնելու։ Նա մի կողմից ճոր պայմաններ է ստեղծում, վորոնք կապիտալին այդ հնարավոր են դարձնում, մյուս կողմից՝ դրա համար ճոր դրդապատճառներ։

Մեքենան ընդունակ է մշտնջենական շարժման և սահմանափակված է միայն մարդկային ոժանդակ աշխատուժի թուլությամբ ու սահմանափակությամբ։ Այն մեքենան, վոր 20-ժամյա աշխատանքով $7\frac{1}{2}$ տա-
րում է մաշվում, կապիտալիստի համար նիւս նույնչափ հավելաօրէնացեալ է կլանում, սակայն կես ժամանակում, վորչափ այն մեքենան, վորը 10-ժամյա աշխատանքով 15 տարում է մաշվում. p. 393 (348) [368-370]։

Մեքենայի բարոյական մաշումը—by superseding¹—այդ դեպքում ավելի փոքր չափով է վտանգվում. p. 394 (348) [370]։

Այնուհետև, ավելի մեծ աշխատաքանակ է կլանվում առանց շենքերի ու մեքենաների ծախսեր մեծացնելու, ուրեմն վոչ միայն հավելարժեքն է աճում յերկարացված աշխատողի հետ միասին, այլ և նրա ձեռքերման համար անհրաժեշտ ծախքերն են հարաբերաբար նվազում։ Սա այնչափ ավելի կարևոր է, վորչափ կապիտալի նիւսնակում մասը շատ է գերակշռում, ինչպես խոշոր արդյունաբերության դեպքում. p. 395 (349) [371]։

Մեքենայի առաջին ժամանակաշրջանում, յերբ նա մեծացնողային բնույթ ունի, շահույթները հսկայական են, այդ պատճառով ել ավելի յե մեծանում աշխատողի անչափ յերկարացման ծախսով։ Մեքենայի ընդհան-

րական մոծումից հետո այս մենաշնորհային շահույթը չքանում է, և ուժի մեջ է մտնում այն որեւէքը, վոր հավելարժեքը վոչ թե մեքենայի փոխաօրէնած, այլ նրա գործադրած աշխատանքից է բղխում, հետևաբար՝ փոփոխուն կապիտալից։ Բայց վերջինս մեքենայական արտադրության դեպքում մեծ ծախքերի շնորհիվ անհրաժեշտաբար փախցվում է։ Մեքենանու կապիտալիստական գործադրման մեջ կա մի իմանենտ հակասություն. կապիտալի տվյալ մասսայի համար նա մեծացնում է հավելարժեքի մի գործոնը՝ նրա նսման, նրանով, վոր մյուսը՝ բանվորների թիվը, փախցնում է։ Հենց վոր ապրանքի մեքենայական արտադրման արժեքն այս ապրանքի կառգավորող արժեք է դառնում, հանդես է գալիս այս հակասությունը և կրկին մղում է դեպի աօխաօրի յերկարացումը. p. 397 (351) [373]։

Բայց մեքենան դուրս մղված բանվորներին ազատելու, ինչպես և կանանց ու յերեխաներին ներգրավելու միջոցով միաժամանակ ավելցուկ բանվորակա բնակչութլւն է արտադրում, վորն ստիպված է յենթարկվել կապիտալի թելադրած որեւէին։ Այդ պատճառով նա խորտակում է աշխատողի բոլոր բարոյական և բնական սահմանները։ Այստեղից ել այն պարագոքսը, վոր աշխատաժամանակի կարճացման հզորագույն միջոցը ամենաանվրեպ միջոցն է դառնում բանվորի ու նրա ընտանիքի ամբողջ կյանքը կապիտալի արժեմեծացման համար տրամադրելի աշխատաժամանակ դարձնելու. p. 398 (351) [373—374]։

Մենք արդեն տեսանք, թե ինչպես է այստեղ հասարակական հակադդեցությունը հանդես գալիս նորմալ աշխատողը սահմանելու միջոցով. և այս հիմքի

¹ Փոխարինման ժամանակ

վրա դարձանում և այժմ աշխատանքի լարումացումը.
p. 399 (353) [375]:

Սկզբում մեքենայի արագացման համընթաց աճում
էր միաժամանակ աշխատանքի լարումությունը
ժամանակի յերկարացման հետ միասին: Բայց շու-
տով այնպիսի կետ և գալիս, վորտեղ այդ յեր-
կուան իրար բացառում են: Այլ և, սակայն, սահ-
մանափակման դեպքում: Լարումությունը կարող և
այժմ աճել, 10 ժամում կարող և այնքան աշխատանք
մատակարարվել, վորքան առաջ 12 ժամում, կամ ա-
վելի, և այժմ ավելի լարում աշխատողը համարվում և
աշխատողը բարձրացված աշխատող, և աշխատանքը չափ-
վում և վոչ թե լոկ ժամանակի յերկարությամբ, այլ
նրա լարումությամբ. p. 400 (353) [376]:

Այսպես ուրեմն 5 ժամ անհրաժեշտ աշխատանքով
և 5 ժամ հավելաշխատանքով կարող և միևնույն հա-
վելարժեքը ձեռքբերվել, ինչ վոր ավելի փոքր լարում-
ության դեպքում 6 ժամ անհրաժեշտ և 6 ժամ հավել-
աշխատանքով. p. 400 (354) [376]:

Ի՞նչպես և աշխատանքը լարումացվում: Մանուֆակ-
տուրայում, ապացուցված և (ծանոթագրություն 159),
որինակ՝ կավագործության մեջ և այլն, վոր աշխատե-
րի ստեղծումն կարճացումը բավական և, վորպեսզի ար-
տադրողականությունը հսկայական չափերով բարձրա-
նա: Մեքենայական աշխատանքի դեպքում այս շատ ա-
վելի կասկածելի չիր: Բայց՝ Ռ. Գարդները ապացույցը.
p. 401—402 (355) [376—378]:

Հենց վոր աշխատողի կարճացումն ուրեմն և դառ-
նում, մեքենան միջոց և դառնում բանվորից ավելի
լարում աշխատանք դուրս քամելու կամ greater speed¹-ի

¹ Ավելի մեծ արագություն:

կամ less hands in relation to machine¹-ի միջոցով:
Որինակներ p. 403—407 (356—360) [378—382]: Վոր
դրա հետ միաժամանակ գործարանների հարստացումն ու
ընդարձակումն աճում և, հիմնավորված և p. 407—409
(360—362) [382—384]:

c. Գործարանի ամբողջությունն իր դասական կերպարանով

Գործարանում մեքենան հոգում և գործիքի նպա-
տակահարմար վարումը, հետևաբար աշխատանքի վո-
րակական տարբերությունները, վորոնք զարգացվել
էին մանուֆակտուրայում, այստեղ վերացվում են,
բանվորներն ավելի ու ավելի համալսելի են
դարձվում, տարբերությունն ամենաշատը հասակի յ և
սեռի: Աշխատանքի բաժանումն այստեղ՝ բանվորների
բախումն և մասնատված մեքենաների միջև: Այստեղ
կա լոկ բաժանում գլխավոր բանվորների, վորոնք իրա-
պես գործիք-մեքենայի մոտ են դրադված, և feeders²-ի
միջև (այս ճիշտ և միայն selfactor³-ի նկատմամբ,
նվազ ճիշտ throstle⁴-ի, և ավելի նվազ ճիշտ power
loom⁵-ի նկատմամբ), սրան ավելանում են վերահս-
կողները, engineers⁶ և stockers⁷, mechanics⁸, joiners⁹
և այլն, մի դասակարգ, վորը գործարանին լոկ ար-
տաքնապես և կցված. p. 411—412 (364) [386—387]:

Վորևե ավտոմատի անընդհատ շարժմանը բանվորի

¹ Ավելի փոքր թվով ձեռքեր մեքենաների համեմատությամբ:

² Ոգնականներ:

³ Ինքնաշարժ ճախարակ:

⁴ Նրբաման մեքենա:

⁵ Մանածագործական շոգենաստոց:

⁶ Ճարտարագետներ:

⁷ Հնոցապաններ:

⁸ Մեքենագեղաներ:

⁹ Ատաղձագործներ:

հարմարվելու անհրաժեշտությունը պահանջում է սո-
վորում պատանեկությունից ի վեր, բայց այլևս վոչ
այնպես, ինչպես մանուֆակտուրայում, վոր մի բան-
վոր մի մասնաֆունկցիայի կենսատեղերն կցված լի-
նեւր: Կարող է անձերի փոփոխություն տեղի ունենալ
միևնույն մեքենայի մոտ (relaissystem¹) և վորովհետև
սովորելու ջանքը չնչին է, բանվորներին կարելի յե
լինում մեքենաների մի տեսակից մյուսը փոխադրել:
Ոգնականի աշխատանքը կամ շատ պարզ է կամ ավե-
լի ու ավելի մեքենային է անցնում: Այնուամենայնիվ
աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը սկզբում
քարշ է տալիս իր գոյությունն ավանդաբար և ինքը
դառնում է կապիտալի շահագործման ել ավելի մեծ
միջոց: Բանվորը կենսատեղերն դառնում է մի մաս-
նամեքենայի մաս. p. 413 (366) [387—389]:

Ամեն կապիտալիստական արտադրություն համար,—
վորչափով նա վոչ միայն աշխատանքային պրոցես է,
այլ և կապիտալի արժեմեծացման պրոցես,—ընդհա-
նուր է այն, վոր վոչ թե բանվորն է աշխատանքի
պայմանը կիրառում, այլ, ընդհակառակը, աշխատանքի
պայմանն է բանվորին կիրառում. բայց այս փոխաշըր-
ջումը մեքենանու շնորհիվ է առաջին անգամ տեխնո-
լոգիայես ռեալիտի իրականություն դառնում:

Աշխատամիջոցն իր մի ավտոմատի փոխարկվե-
լու միջոցով հենց աշխատանքային պրոցեսի ժամանակ
բանվորի դեմն է յեղնում իբրև կապիտալ, իբրև մեռած
աշխատանք, վոր իշխում է կենդանի աշխատուժի վրա
և դուրս է ծծում այն: Ditto² արտադրության պրո-

ցեսի հոգևոր կարողություններին, իբրև կապիտալի
իշխանությունն աշխատանքի վրա... Անհատական,
վարժուն մեքենայաբանվորի մասնահատությունը չքա-
նում է իբրև մի չնչին կողմնակի բան գիտություն
առաջ, բնություն հսկայական ուժերի ու հասարակա-
կան մասսայական աշխատանքի առաջ, վորոնք մարմ-
նացած են մեքենայական սխտեմի մեջ. p. 414, 415
(366, 367) [390]:

Գործարանի զորանոցային կարգապահությունը,
գործարանային որենսդիրքը. p. 416 (367) [391]:

Գործարանի ֆիզիկական պայմանները. p. 417,
418 (369, 370) [392, 393, 394]:

c' կամ d. Բանվորների պայքարը գործարանային սխտեմի
յեկ մեքենայի դեմ

Այս պայքարը, վորն սկսվում է կապիտալիստական
հարաբերություններին հաստատումից ի վեր, այստեղ
նախ հանդես է գալիս իբրև ըմբոստացում մեքենայի
դեմ, վորպես կապիտալիստական արտադրայեղանակի
նյութական հիմքի դեմ: Ժապավենամեքենա. p. 419
(371) [394—395] Լուղդիտները. p. 420 (373) [396]: Մի-
այն ավելի ուշ ժամանակներում են բանվորները տար-
բերում նյութական արտադրամիջոցը նրա շահագործ-
ման հասարակական ձևից:

Մանուֆակտուրայում աշխատանքի կատարելա-
գործված բաժանումն ավելի շուտ միջոց է բանվորնե-
րին կառաջապես փոխարինելու. p. 421 (373) [396]:

(Եկսկուրս յերկրագործության մասին. արտամղու-
մը. p. 422 (374) [396]):

Մեքենայական արտադրության մեջ, սակայն, բան-
վորն իրապես դուրս է մղվում, մեքենան անմիջորեն

¹ Հերթափոխություն սխտեմ:

² Նույնը վերաբերում է:

մըցում ե նրա հետ: Hand loom weavers¹ p. 423 (375) [398]:

Ditto² Հնդկաստանին. p. 424 (375) [398]: Այս ներգործութիւնը հարատե ե, վորովհետե մեքենան շարունակ նոր արտադրադաշտեր ե ընդգրկում: Այն ինքնուրույնացված ե ոտարված կերպարանքը, վոր կապիտալիստական արտադրութիւնը տալիս ե աշխատամիջոցին բանվորի նկատմամբ, մեքենայի միջոցով զարգանում ե մինչև լիակատար հակադրութիւն: Այս պատճառով այժմ բանվորների ըմբոստացումն սկզբում աշխատագործիքի դեմ ե. p. 424 (376) [399]: Մեքենայի միջոցով բանվորի արտադրման մանրամասները. p. 425, 426 (376, 377) [399—402]: Մեքենան միջոց ե դառնում արտադրման միջոցով կոտրելու բանվորներին դիմադրութիւնը հանդեպ կապիտալի. p. 427, 428 (379—381) [402—405]:

Լիբերալ տնտեսագիտութիւնը պնդում ե, վոր բանվորներին արտադող մեքենան միաժամանակ մի կապիտալ ե ազատում, վորը կարող ե այդ բանվորներին զբաղմունք տալ: Բայց, ընդհակառակը՝ մեքենաների ամեն մի մուծում կապիտալ ե կապում, փոքրացնում ե նրա փոփոխուն մասը, մեծացնում ե հաստատուն մասը, հետևապես կարող ե միայն սեփականափակել կապիտալի՝ զբաղմունք տալու ունակութիւնը: Իրապես,—ե այդպես են կարծում նաե այդ ջատագործները,—այս ձեով վոչ թե կապիտալ ե ազատվում, այլ տեղազրկված բանվորների կենսամիջոցներն են ազատվում, բանվորն ե կեցսամիջոցից ազատվում, մի բան, վոր ջա-

տագործն այսպես ե արտահայտում, թե մեքենան կենսամիջոցներ ե ազատում բանվորի համար. p. 429—430 (381—383) [405—406]:

Այս ավելի զարգացրած ե (շատ լավ fortnightly-ի¹ համար) p. 431—432 (383—384) [407—408]:

Մեքենայի կապիտալիստական կիրառումից անբաժանելի հակամարտութիւնները ջատագովի համար գոյութիւն չունեն, չորսվիճակ նրանք վոչ թե մեքենայից իրենցից են առաջանում, այլ նրա կապիտալիստական կիրառումից. p. 432 (385) [408]:

Արտադրութեան ընդլայնումը մեքենաների միջոցով ուղղակի ե անուղղակի ու այդպիսով բանվորների մինչայժմայն թվի հնարավոր մեծացումը՝ հանքաբանվորներին, Cotton states²-ում ստրուկներին ե այլն: Դրա հակառակ բրդեղենի գործարանների շնորհիվ շտրանդացիների ե իռլանդացիների արտադրումը վոչ լարների կողմից. p. 432, 434 (386, 387) [410, 411]:

Մեքենայական արտադրութիւնն աշխատանքի հաստատակամ բաժանումը շատ ավելի յե մեծացնում, քան այդ անում եր մանուֆակտուրան. p. 435 (388) [412]:

c" կամ e. Մեքենան յեկ հալկարմեքի

Մեքենայի առաջին հետևանքն ե՝ հալկարմեքի ե զրա հետ միասին արտադրանքի այն մասսայի մեծացումը, վորի մեջ նա ներկայանում ե, ե վորը կապիտալիստների դասակարգը ե նրա արջանյակները կանում են,—ուրեմն կապիտալիստների թվի մեծացումը. պերճանքի նոր պահանջ ե առաջանում ե զրա հետ մի-

¹ Ձեռնաշխատ ջուրհաններ:

² Նույնը վերաբերում ե:

¹ «Յերկշաբթիա հանդես»:

² Բամբակի շտամներում:

ասին միջոցներ նրա բավարարման համար: Պերնանցի առաքելաների արձագրությունն աճում է, աճում են նմանապես և հաղորդակցության միջոցները, վորոնք սակայն, քիչ աշխատութեւր են կլանում զարգացած յերկիրներում (ապացույց. p. 436 (389) [412—413]). վերջապես աճում է սպասավորողների դասակարգը՝ արդի օնային ստուկներ, վորոնց համար նյութ է մատակարարում [բանվորների] ազատ կացուցումը... p. 437 (389) [412—413]:

Վիճակագրությունը: Տնտեսական հակասությունները. p. 437 (390) [414]:

Մեքենայի [մոծման] հետևանքով աշխատանքի բացարձակ անման հնարավորությունը արտադրության մի ճյուղում և այս պրոցեսի տարբեր տեսակները. p. 439—440 (393) [417—418]:

Խոշոր արդյունաբերության հսկայական ձկունությունը, հանկարծական թռիչքաձև ընդարձակումը զարգացման մի բարձր աստիճանի վրա. p. 441 (394) [418]: Հետադարձ ներգործությունը հումք արձագրող յերկրների վրա: Արտագաղթ՝ բանվորների ազատ կացուցման հետևանքով: Աշխատանքի միջազգային բաժանումը արդյունաբերական և յերկրագործական յերկիրների միջև: Ճգնաժամների և ծաղկման պարբերականությունը. p. 442 (395—396) [420]:

Բանվորին այս ու այն կողմ նետելը ընդարձակման այս պրոցեսի ընթացքում. p. 444 (398) [422]:

Պատմական տեղեկություններ այս մասին. p. 445—449 (398—402) [422—427]:

Այնուհետև կոոպերացիայի և մանուֆակտուրայի արտամղման մասին մեքենայի կողմից (միջնաստիճանները. p. 450—451 (403—404) [427—429]). նաև վոչ-

գործարանային արտադրության արտամղումը. արդյունաբերության այդ ճյուղերը [վարվում են] խոշոր արդյունաբերության վոգով: Տնային աշխատանքը՝ գործարանի մի արտաքին բաժանմունք. p. 452 (404) [429—430]: Տնային աշխատանքում և արդի մանուֆակտուրայում շահագործումն էլ ավելի անամոթ է, քան բուն իսկ գործարանում. p. 453 (405) [430]:

Որինակներ՝ Լոնդոնի տպարանները. p. 453 (406) [431]: Կազմատներ, քրջեղենի տեսակավորանոց p. 454 (406) [431]: Աղյուս թրծողներ p. 455 (406) [431]: Արդի մանուֆակտուրան ընդհանրապես. p. 456 (408) [432]: Տնային աշխատանք՝ ժամկետայինում. p. 457—459 (409—411) [434—437]: Մոտագործությունը p. 460 (411) [437]: Գործարանային արտադրության փոխարկվելը, յերբ շահագործելությունն իր ծայրահեղ սահմանին և հասել Wearing Apparel¹ կտրի մեքենայի միջոցով. 462—465 (413—416) [438—443]:

Այս փոխարկման արագացումը գործարանային պարտադիր որենքների տարածման շնորհիվ, վորոնք վերացնում են անսահմանափակ շահագործման վրա հիմնված միջնային սովորութիւնը. p. 468 (417) [443—444]: Որինակ՝ կավագործությունը p. 467 (418) [444]: Լուցկեգործությունը. p. 468 (418) [444]: Այնուհետև գործարանային որենքների ներգործությունն անկանոն աշխատանքների վրա, [վորոնք կապված են] հարկադրական անգործության, ինչպես նաև սեղոնների և մողաների հետ. p. 470 (420) [446—447]: Գերաշխատանքը տնային աշխատանքում և մանուֆակտուրա-

¹ Զգեստեղենի պատկանելիքներ:

յում սեղոնի հետեանքով առաջացած հարկադրական պարապուկթյան կողքին. p. 471 (420) [447]:

Գործարանային որենքների առողջապահական հոգւթաները. p. 473 (422) [449]: Դաստիարակության վերաբերյալ հոգւթաները. p. 476 (424) [451]:

Բանվորների ազատ կացուցումը լոկ հասանելի պատճառով, հենց վոր նրանք տարեկանը են դարձել, այլև տվյալ աշխատանքի համար հարմար չեն, այլև յերեխայի վարձով ապրել չեն կարող և զրա հետ միասին նոր աշխատանք ել չեն սովորել. p. 477 (426) [454]: Mysteries*-ի և մանուֆակտուրայի ու արհեստի ավանդական վոսկրացման վոչնչացումը խոշոր արդյունարերության կողմից, վորն արտադրության պրոցեսը փոխարկում և բնության ութերի գիտակցական կիրառման: Այդ պատճառով բոլոր նախկին ձեերի համեմատությամբ նա յե միայն հեղափոխական. p. 479 (428) [454—455]: Բայց իբրև կապիտալիստական ձե նա բանվորի համար պահպանում և աշխատանքի վոսկրացած բաթանումը և վորովհետև նա ամեն որ հեղաշրջում և նրա [աշխատանքի բաթանման] հիմքը, ապա բանվորը զրանից կորստյան և մատնվում: Մյուս կողմից հենց սրա մեջ և, միևնույն բանվորի գործունեյությունների անհրաթեշտ փոփոխության մեջ, նրա ըստ կարելոյն մեծ բազմակողմանիության պահանջը և սոցիալական հեղափոխության հնարավորությունները. p. 480, 481 (429, 430) [456]:

Գործարանային որենսդրությունն արտադրության բոլոր նաև վոչգործարանային ճյուղերի վրա տարա-

ձելու անհրաթեշտությունը. p. 482 և հետ. (431) [458]: 1867-ի ալտը p. 485 (433) [462]: Հանքարանները: Ծանոթագրությունը p. 486 և հետ. (435) [463 և հետ.]:

Գործարանային որենքների համակենտրոնացնող ներգործությունը, գործարանային արտադրության և նրա հետ կապիտալիստական արտադրության զասական ձեի ընդհանրականանալը, նրանից անբաթան հակասությունների սրումը, հին հասարակության հեղաշրջման տարրերի և նորի գոյացման տարրերի հասունացումը. p. 488—489 (442—443) [471]:

Յեղիագործություն: — Այստեղ ազատ կացուցումը մեքենաների միջոցով ել ավելի սուր բնութ ռնի: Գյուղացու փոխարինումը վարձու բանվորով: Գյուղական տնային մանուֆակտուրայի վոչնչացումը: Քաղաքի և գյուղի հակադրությունների սրումը: Գյուղական բանվորներին ցաքուցրիվ անելը և թուլացնելը, մինչդեռ քաղաքային բանվորները համակենտրոնացվում են, այս պատճառով յերկրագործական բանվորի վարձն իջնում և մինիմումի: Դրա հետ միասին հողի կողոպուտը—կապիտալիստական արտադրայեղանակի պսակը, ամեն հաբսության աղբյուրի՝ հողի և բանվորի ութադրկումը (untergraben). p. 493—496 (444—446) [473—475]:

V. ՀԵՏԱԳԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՎԵ-
ԼԱՐԺԵՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

* Արհեստավորների խորհրդավոր սովորությունները, վորենք մինչև 18-րդ դարը պահանվեցին:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ծր
I ԳԼՈՒԽ, ԱՊՐԱՆՔ ՅԵՎ ՓՈՂ	7
1. ապրանքն ինքնին	—
2. ապրանքների փոխանակության պրոցեսը	10
3. փողը կամ ապրանքաշրջանառությունը	18
A. Արժեքների չափը (վոսկին յենթադրե- ված է = փողին)	—
B. շրջանառության միջոց	14
C. փող	20
II ԳԼՈՒԽ, ՓՈՂԻ ԿԱՊԻՏԱԼ ԴԱՌՆԱԼԸ	26
1. կապիտալի ընդհանրական փորձույան	—
2. ընդհանրական փորձույանի հակասությունները	30
3. աշխատուժի գնումն ու վաճառումը	34
III ԳԼՈՒԽ, ԲԱՅԱՐՁԱԿ ՀԱՎԵԼԱՐԺԵՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ	39
1. աշխատանքի պրոցեսը յեվ արժեմեծացման պրոցեսը	—
2. հատատումն յեվ փոփոխումն կապիտալ	42
3. հավելարժեքի նորման	46
4. աշխատոր	47
5. հավելարժեքի նորման ու մասան	53
IV ԳԼՈՒԽ, ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՎԵԼԱՐԺԵՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ	57
1. հարաբերական հավելարժեքի գաղափարը	—
2. կոոպերացիա	59
3. աշխատանքի բաժանումը յեվ մանուֆակտուրա	66
4. Մեքենան յեվ խոշոր արդյունաբերությունը	72

Վ Ր Ի Պ Ա Կ

*14 հջում, ներքեից 4-րդ տողում տպված է՝ Ապրանքների փոխանա-
կությունը, սկսած է լինի Ապրանքների փոխակերպությունը:*

Քաղաք. Ա. Տոնյան

Խմբ. Հ. Դյուլիֆելիսյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Սրբ. Վ. Ջիդեյան

Կոնսր. սրբ. Յեր. Տ.-Մինասյան

Գլավլիտի լիազոր Ի—4875, հրամ. № 436,


Պատվեր № 51, արժ 3000, ինդեքս $\frac{\text{ПМЭ}}{\text{HK}}$

Հանձնված և արագորոշյան 23/III 1937 թ.

Ստորագրված և ապագորոշյան 7/V 1937 թ.

Գին՝ 50 Կ.

Հայկական հրատի տպարան, Յերեան, Ալլադիերդյան № 71



ՀՀ Ազգային գրադարան



NL0172547

